

Սուրեն Դ. Դանիելեան  
բանաս. գիյր. դոկտոր

## ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ՆՈՐԱԳՈՅՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ\*

### Նախնական դրոյթներ

Արեւմտահայ եւ արեւելահայ գրական ընթացքները ունեցել են եւ ունեն գրական տարբեր առաջադրութիւններ, հետապնդում են գեղարուեստական ճանաչողութեան տարբեր նպատակներ: Ժամանակ է եղել, երբ անգամ՝ փորձել են բացառել մէկը միւսին: Լեզուն նոյնն է՝ երկու գրական մակարդակներով, միջավայրերը, յաճախ նաեւ սնուցման աղբիւրները՝ տարբեր: Մի դէպքում, անցեալ դարի 20-ական թթ. ի վեր, մենք ունենք հայրենիքում ձեւուած, իրական ենթահողով թրծուած գրականութիւն՝ նուաճումներ, կորուստներ, դասական բարձրակոչ դէմքեր, միւս պարագային՝ ազգայինին կառչած, միջավայրերով, լեզուով կոտորակուած, յաճախ դէպի օտար մտածողութեան գայթակղութիւններին բացուելու պատրաստ ու այս ամէնից յոգնած, պարտասած, ազգային գրամշակութային դարպասների մօտ հանգրուանելու շիջած, բայց յամառելու մէջ մի՛շտ առաջինների շարքերում իրենց վերագտած, արեւմտահայերէնը խաչի պէս ուսամբարձ պահած Սփիւռքի գրական շարժման առաջնորդներ, լուսագոյն ուժեր:

Արեւմտահայ նորագոյն գրականութեան գիտական պատմութիւնն այսօր պահանջում է, նախ, պարբերացման հետ կապուած հնարատր վերարժեւորումներ՝ տեսաբանական քննութեան նոր, արդիւնատր որոնումներ, բովանդակային անհրաժեշտ ուրուագծեր եւ շարժման հետ կապուած ընդհանրական դիտարկումներ, բնագրական նոր հայեացք: **Սփիւռքի ազգային-քաղաքական եւ մշակութա-**

\* Համաձայն ենք պրօֆ. Ս. Դանիելեանի այն հարցադրման հետ, որ «Սփիւռքահայ գրականութիւն» հասկացութիւնն ինչ-որ առումով արուեստածին է, քանի որ որոշակի կաղապարների մէջ է ներառում ուրոյն արժեքային համակարգ ունեցող արեւմտահայ գրականութեան աւանդոյթները: Սփիւռքը պարտադրուած գոյավիճակ է, իսկ Սփիւռքի հայ հեղինակների մեծագոյն մասը՝ որպէս արեւմտահայերէնով ստեղծագործող գրողներ ու բանաստեղծներ, արեւմտահայ նորագոյն գրականութեան ներկայացուցիչներ են: Այդ պատճառով, «Սփիւռքահայ գրականութիւն» բնորոշման հետ միասին իր գոյութեան իրաւունքն ունի նաեւ «Արեւմտահայ նորագոյն գրականութիւն» եզրոյթը, որի մէջ, անշուշտ, չեն մտնում Սփիւռքում արեւելահայերէնով ստեղծագործող հեղինակները: Ի վերջոյ, գրական չափանիշերով «Սփիւռքահայ գրականութիւն» բնորոշումը կենդանի գրական շարժումը շփոթում է պարզ աշխարհագրութեան հետ, որովհետեւ գրականութեան հիմքը լեզունն է, աւանդոյթը եւ գիտակցութիւնը: Ուստի հայ գրականութեան երկչերտութեան մէջ հավասարակշռութեան պահպանումն է ապագայի «գրական մեկութեան»՝ միասնական գրականութեան ուղին: Խմբ.

Յօդուածն ընդունուել է տպագրութեան 02.12.2009 թ.:

թիվ 3(28) հոկտեմբեր-դեկտեմբեր 2009

վեմ համահայկական համընթաց

յին միջավայրի ձեւաւորման, զարգացման, գրականութեան միասնութեան եւ տարանջատման հանգոյցներին առնչուող օրինաչափութիւնները անհրաժեշտ է քննել Սփիւքի եւ մշակութային հայրենիքի, Սփիւքի եւ իրական Հայաստանի, արեւմտահայ եւ արեւելահայ, Սփիւքի եւ համաշխարհային գրական զարգացումների փոխներթափանցումների լոյսի ներքոյ:

Սփիւքի գրական շարժումների, հետաքրքրութիւնների պատմահամեմատական բազմաձալ գուգահեռները, գրողներին տրուած գնահատութիւնները դառնում են մեթոդաբանական յուսալի հիմք գրչօջախների ներքին բովանդակային կողմերը ներկայացնելիս: Դա վերաբերում է մասնաւորապէս արեւմտահայ գրականութեան շարունակականութեանը, տարբեր օջախների գրական թռիչքածէ, անկանոն զարգացման բացայայտումներին, գրապատմական յարաճուն տեղաշարժերին:

Այստեղ, որքան հնարաւոր է, լայն խորքով պէտք է ճանաչել հայ օջախների գրապատմական զարգացումը՝ ազգային ձեւաւորուած հաստատութիւններով, անվերջ փոփոխական բնոյթով, գրական ներուժի տեղաշարժերով, վերելքով ու վայրէջքներով, հեղինակների խաղացած դերով, գրականութեանը նրանց բերած կշռի նպաստով, մասնովով, ժողովածուներով, բուն գրողների ճանաչողական ներկայութեամբ:

Բնականաբար, տեսական-քննական հիմնահարցերն են գրականութեան շարժման համընդհանուր ուրուագծումը, աւանդոյթների եւ Տղեռնը վերապրած հեղինակների խաղացած դերի քննութիւնը, նոր ուժերի եւ սերունդների գրական համալրման պատմութիւնը, խորհրդահայ գրողների հետ ոչ միաշերտ առնչութիւնները եւ ստեղծագործական շահագրգիռ յատկանիշների վերհանումը եւ, ի հարկէ, Սփիւքի հայ գրականութեան հայակենտրոն ու հայաստանակենտրոն զարգացումները:

#### **ա) Համընթացն ու հակընդդէմը հայ նորագոյն գրականութեան երկփեղկ շերտերում**

Հայ նոր գրականութեան ընթացքները երկատուած էին ի սկզբանէ:

Արեւելահայ եւ արեւմտահայ գրական յարաբերական ինքնուրոյնութիւնը վկայում է տարանջատուած զարգացումների աւանդոյթի մասին: Այսօր էլ դա այդպէս է: Այն ժամանակ, երբ արեւելահայ գրականութիւնը վերջապէս հանգրուանեց Հայաստանում, ստացաւ հայրենի գրանցում, ցեղասպանութեան հետեւանքով կոտորակուած արեւմտահայ գրական դպրոցը բռնեց «ինքնապայթումի» պարտադրուած եղանակը՝ փշրուեց: Կարելի է արձանագրել, որ ստեղծագործական միաձոյլ ներուժը մանրացաւ, յաճախ նաեւ փոշիացաւ աշխարհի ամենատարբեր երկրներում, իսկ գեղարուեստական մտածողութիւնը տարիների ընթացքում կորցրեց գրական ամբողջական հայեացքի կերպը, հայրենի գրաշխարհի ջերմութիւնը, ենթարկուեց եւ շարունակաբար ենթարկուած է քաղաքական ու մշակութային ազդեցութիւնների:

Եթէ դեռ խօսում ենք գրական ամբողջական զարգացումների մասին, ապա պիտի խոստովանենք, որ միասնութեան հունը մեզանում մնում է դեռեւս ցանկութիւն: Իրականում 21-րդ դարի սկզբին հայ գրականութիւնը շարունակում է մնալ երկատուած, ինչպիսին եղել է նոր գրականութեան ձեւաւորման շրջանից ի վեր:

Տրոհուածութիւնը դարձել է նրա անբաժան յատկանիշը:

Այսօր գրականութեան մէջ հիմնարժէքների փոփոխութիւնների, ճանաչողական իւրատեսակ անցումների բարդ շրջան է: Մենք մօտենում ենք նաեւ ազգային

գրականութեան նոր պարբերացումի պահանջին, որը յատկանշում է գրական երկու հատուածների միջեւ եղած փոխներթափանցումների գորացմամբ, ինչը այս կամ այն չափով սկզբունքային խնդիր է եղել գրականութեան «երկրորդ պատուհանի» պատմաբաններ Յակոբ Օշականի, Լեւոն Շանթի, Կարօ Սասունու, Գուրգէն Մխիթարեանի, Սինաս Թէօլէօլեանի, Գեղամ Սեւանի, Վազգէն Գաբրիէլեանի եւ այլոց համար:

Այդ խնդիրն իր ողջ ծանրութեամբ զգում ենք մեր ուսերին:

Այլ կերպ՝ մենք այսօր մօտենում ենք կարծես գրական ընթացքների միաշերտութեան սահմաններին, երբ ջնջում են ներքին բաժանարարները ոչ միայն աշխարհագրական-տարածքային առումներով, երբ «փակում է» կարծես շղթայի հնագոյն երկու օղակներից մէկը՝ արեւմտահայ գրական ուղղութիւնը, իսկ աւելի որոշակի՝ լեզուական ընկալումների միահիւստեան ճանապարհին առաջին անգամ գերիշխան, տիրական կարգավիճակ է ձեռք բերում «յաղթարշալի» ելած արեւելահայերէնը: Այստեղից՝ արեւելահայ գրականութեան՝ հնից եկող անդու ձգտումը՝ անվերապահ առաջնութիւն արձանագրել ստեղծագործական մրցակցութեան մէջ:

Այդ մասին դեռ անցեալ դարասկզբին հնչեցնում էր Դանիէլ Վարուժանի, Միսաք Սեծարենցի, Ռուբէն Սեւակի նոյնքան մեծ ժամանակակից Վահան Տէրեանը՝ իրատեսակ համոզումով, թէ արդէն 1914-ին հզօր զարթօնքի շրջան բոլորած արեւմտահայ գրականութիւնը չէր պահում առանձնակի թովչանք: Տրուելով նախապաշարուած որոշակի ծայրայեղութեան՝ ծրագրային յօդուածներում բաց ոճով ու հակադրական մղումով նա խոստովանում էր. «Իմ աչքում պոլսական եւ առ հասարակ արեւմտեան գրականութիւնն ու լեզուն բնաւ այն հմայքը չունեն»<sup>1</sup>: Եւ դա այն ժամանակ, երբ գրական շարժում կար, երբ ասպարէզում ամենի Դ. Վարուժանն էր:

Եթէ անգամ բանաստեղծն ընդվզում էր «յանկարծակի հեթանոսացած» քերթողական մտքի դէմ, ապա չէր կարելի սուսեր ճօճել արեւմտահայ լեզուի ու գրական արմատի ուղղութեամբ: Լինելով կանխակալ թերահաւատութեան մէջ՝ Վ. Տէրեանը բացարձակացնում էր գրականութեան ընկերային-ազգային զարգացման ենթահողը: Նա երեսոյթը համարում էր համընդհանուր արեւմտահայ աշխարհի համար եւ միտքը սեւեռում այդ գրականութեան անհեռանկարայնութեան ընկալման վրայ. «Իմ խօսքը հոսանքին, ընդհանուր ուղղութեանն է վերաբերում եւ ոչ առանձին գրողներին: Խօսքը վերաբերում է գրականութեան ընդհանուր ոգուն ու շնչին»<sup>2</sup>: Բոլորագիծ չափումով գոյները խտացում են. ոգեւորութեան աստիճանը բանաստեղծը քննում է արեւմտահայ «ազգային» (իր բառով՝ ազգամոլութեան) սրուած ընկալման ելագծով, որն իր համար ի սկզբանէ մերժելի է:

Վ. Տէրեանին առաջին բացորոշ քննադատողներից եղաւ երիտասարդ Պարոյր Սեւակը՝ գտնելով, որ արեւելահայ երգիչը «...հասաւ ծայրայեղութեան: Նա հասաւ այնտեղ, որ ժխտեց ամբողջ արեւմտահայ գրականութիւնը այն պարզ պատճառով, որ այնտեղ աւելի ցցուն կերպով, քան արեւելահայ հատուածում, երեւան էին գալիս նեղ-ազգային յատկանիշերը: Պատահական չէ, որ Տէրեանը առանձնապէս սուր եւ յակամէ-յանուամէ արտայայտուեց Վարուժանի նկատմամբ՝ գտնելով, որ Թումանեանի մի «Փարսնա» չի փոխի «յանկարծակի հեթա-

1 Վահան Տէրեան, Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 3, Եր., 1975, էջ 92:

2 Նոյն տեղում, էջ 93-94:

նուսացած» արեւմտահայ բոլոր բանաստեղծների հետ՝ առաջին հերթին նկատի ունենալով Վարուժանին: Խնդիրն այն է, որ Տէրեանը այս դեպքում մոռացութեան էր տալիս հենց այն վճռական հանգամանքը, որ մեր գրականութիւնը դնում էր ճակատագրական վիճակի մէջ:... Տէրեանը պահանջում էր անհնարինը այն իմաստով, որ մոռացութեան էր տալիս «իրենից դուրս» գոյութիւն ունեցող ահաւոր ներհակութիւնը»<sup>3</sup>:

Համալսարանը նոր-նոր աւարտող Պ. Սեւակը 1945-ին ելնում էր իմացական՝ «ինքն իր մէջ» եւ «աշխարհը՝ բանաստեղծից դուրս» հայեցակէտերից: Որքան խորն էր հակասութիւնը, այնքան մեծ էր բանաստեղծի իմացականութիւնը, այնքան ողբերգական՝ ժամանակը: Ենթագիտակցօրէն նա բնութագրում էր Վ. Տէրեանի սխալները՝ արեւմտահայ միջավայրի եւ բանաստեղծութեան ազգային զարգացման ու տրամաբանութեան ներքին կապերը արհամարհելու փաստի մէջ, ինչի հետեւանքով դարասկզբի արեւելահայ երգիչն ակամայ ընկնում էր ժխտման արուեստածին բանաձեւերի գիրկը:

Նոյն խնդիրների եւ նոյն պահանջի մասին ներքին ազնիւ անհանգստութեամբ 40-ական թթ. կէսերին խօսել է նաեւ Լեւոն Շանթը: Բայց դա<sup>4</sup> էր իր երագածը: Ինքն անբնական էր համարում նման երկոտութիւնը, նաեւ՝ «աւելորդ ու վնասակար», սակայն խնդրին, վիճակների քննութեանը մօտենում էր ոչ հակադրական ելագծով: «Սինչեւ հիմա, - գրում էր նա, - մեր նոր գրականութիւնը (իմա՝ նորագոյն – Ս.Գ.) դարձած է երկու առանցքի շուրջ երկու տարբեր գրական լեզուներով... Ամբողջ հայութեան կեանքն ու միտքը իր արտայայտութիւնը պիտի գտնէ մէկ գրական լեզուով մը»<sup>4</sup>: Լ. Շանթն այն տպաւորութիւնն ունի, թէ կարեւորը լեզուների միատրումն է մէկ կարգի տակ: Նա չի մասնատրում, թէ ինչ սկզբունքներով, չի ուրուագծում վաղուայ լեզուի ուղղութիւնները: Նա արգելափակոցներ չի դնում երկու լեզուներից որեւէ մէկի առջեւ, բնական զարգացումի կողմնակից է: Բայց չի կարելի նաեւ ասել, որ Լ. Շանթը «խտիր» չի տեսնում դարակէսի գրական երկու տարընթաց զարգացումներում: Տեսնում է եւ միանգամից շեշտադրում, որ դա շատ շուտ պիտի դուրս մղուի մեր գործունէութեան հակադիր ընկալումներից. «Ո՛չ միայն պէտք է վերնայ խտիրը մեր արդի երկու գրականութիւններուն մէջէն, այլեւ անշուշտ քիչ մը աւելի դանդաղ, բայց վերնայ պիտի խտրութիւնը անգիր (իմա՝ առօրէական – Ս.Գ.) ու գրաւոր ըստած (իմա՝ գեղարուեստական – Ս.Գ.) գրականութիւններուն մէջէն»<sup>5</sup>:

Լուծման եղանակները փաստօրէն բխում են Լ. Շանթի ռոմանտիկական խառնուածքից. դրանք աւելի կոշուած են թում «խտիրի» վերացման ներքին պահանջին, քան երկու լեզուների միատրումն տեսիլին, որի բնական կամ գիտական ճանապարհները անյայտ են դրամատուրգ-տեսաբանի համար՝ հակառակ պահանջի գիտակցութեան:

Վ. Տէրեանից գրեթէ ութ-ինը տասնամեակ անց այդ մասին թուացեալ ներքին խաղաղութեամբ «վաղուայ անունից» վկայագրում էր նաեւ արձակագիր Հրանդ Մատթէոսեանը՝ մեզանում առաջին անգամ հնչեցնելով մի ողջ մշակութային համակարգի մայրամուտի «օրինաչափութեան» կոչնակները, որի հետ պատմական զուգահեռները, իր կարծիքով, հաստատում են չարագուշակ կանխագագացումը. «Լինելու է մեծ, միասնական հայոց լեզու՝ արեւելահայերէնի հիմքով, -

3 Պարոյր Սեւակ, Երկերի ժողովածուն 6 հատորով, հ. 6, Եր., «Հայաստան», 1976, էջ 301:

4 Լեւոն Շանթ, Ընդհանուր ակնարկ մը հայ բանահիւտութեան վրայ, «Լեւոն Շանթի երկերը», 8 հատորով, հ. 8, Պէյրութ, «Վահէ Սէփեան» տպ., 2008, էջ 459:

5 Նոյն տեղում, էջ 460:

եզրակացնում է նա ընթերցողների համար անակնկալ ձեռով: - Արեւելահայերէնն է, որ, այնուամենայնիւ, պահելու է յիշողութիւնը գրաբարի եւ բարբառների մասին, պահելու է արեւմտահայ մշակոյթը»<sup>6</sup>: Տարակուսանքը դեռ մի կողմ, թէ այդ ինչպէս է իր վրայ արեւելահայերէնը պահելու արեւմտահայ մշակոյթի ծանրութիւնը: Բարձր դերակատարութիւն վերագրելով արեւելահայերէնին՝ արդի արձակի երեւելի առաջատարը վստահութիւն էր յայտնում, թէ իբր միակ ճանապարհը սա է՝ «Արեւելահայերէնը իր մէջ պիտի ներառի ստեղծուած մնայուն արժէքները»<sup>7</sup>: Եւ ուրախ էր կարծես նման միասնութեան զարգացումների համար՝ համարելով դա Ֆիրդուսու, Վոլֆիգանգ Գեօթէի, Ալեքսանդր Պուշկինի, ուրիշների լեզուական բարձր մակարդակին հասնելու ջանքին համահասար պատմական քայլ, որով, իր տպատրութեամբ, յատկանշուած է հայկական նորագոյն գրական ժամանակը:

Գրողի մտքի ենթախորքը, մեր կարծիքով, անթաքոյց է. «Յիշիթ թէկուզ միայն Սփիւռքը, - ուղղորդում է նա իր ժամանակակիցներին մէկ այլ հարցազրոյցի ընթացքում: - Թէկուզ ամէն անգամ, երբ Սփիւռքին շատ մեծ դեր էր տրուած, խաբկանքը տեղումտեղը իրեն ցոյց էր տալիս, որ խաբկանք է, բայց այդուհանդերձ մենք աշխարհով մէկ փռուած ժողովուրդ ենք, կէտը դրսում է, կէտը՝ ներսում. մեզ համար Չեչնիա չէինք կարող սարքել, փակուել չէինք կարող:

Եւ՝ ահա: Բնութագիրը սա է, փաստօրէն՝ դժուար»<sup>8</sup>:

Յիրաւի, «տրուածը» դժուար բնութագիր է, որովհետեւ պէտք է բարձրաձայնել՝ այսօր հայութիւնն իր մէջ երկու երրորդով կրող Սփիւռքը մնում է յարաբերական ու անանցեալ մայր հողի դիմաց (իսկ իր «մետրոպոլիան» ո՞րն է՝ մշուշի մէջ կորած պատմական երկիրը, թէ՞ Պոլիսը, այն, որ ժամանակի թելադրանքով կոչել են արեւմտահայ միջավայր), ինչն արդէն նրա լեզուաբովանդակային տարրի մէջ սխալի, «խաբկանքի» նշոյլ է բերում: Գրանից, ըստ Հր. Մատթէոսեանի, որքան հնարաւոր է, հապշտապ «ազատագրուել է» պէտք՝ ազգային արթնութեան, ներքնատեսութեան պէս մի բան, առանց հայութեան երկու հատուածների միջեւ հակընդդէմ ցոյցերի, առանց մեզանում, իր գտած բառով՝ Չեչնիա սարքելու:

«Ազատագրութեան» նման ուղին կորուստների հետ հաշուի չի նստում: Իսկ կորցնում ենք Հայ Դատի, պահանջատիրութեան մշակութային ապրող երակը: Ի՞նչ սրտով այլեւս ընդունենք, որ գրականութեան մէջ վերջ է տրուած երկատումի բանաձեւերին, որ այլեւս գրականութիւնը զարգացման միասնական հուն է ունենալու՝ այնքա՞ն սպասուած, այնքա՞ն երագուած: Ջուսպ ուրախութեան տեղ, թում է, չունենք, քանի որ մեր համակերպուած, ձեռնմալ հոգեբանութեան արդիւնքում «օրինաչափ» մայրամուտ է ապրում շքեղ արեւմտահայերէնը, մեր անտարբեր հայեացքների առջեւ կորսուած ու անդարձ հեռացումի ճանապարհով մեզ լքում է արեւմտահայ գրամշակութային աշխարհը:

Չկառչենք հնացած ձեւակերպումներից կամ մերօրեայ արդարացում թուացող ելակէտերից, թէ իբր գրական Սփիւռքը յարաբերական է, թէ մեր մեղքը չէ, որ արեւմտահայ գեղարուեստական «հերթափոխը» օտար, բայց տեսանելի հորիզոններում, մեղմ ասած, ուշանում է:

**Սփիւռքը յարաբերական է, ճիշդ է, բայց արեւմտահայ գրամշակութային արժէքները դեռ ընկալուած են իբրեւ «մեզ» մշտական ուղեկիցներ:**

Չկառչենք նաեւ այն նախապայմանից, որ Սփիւռքի գրողը միշտ տառապել է

6 Գրանդ Մատթէոսեան, Ես ես եմ: Գարցազրոյցներ, Եր., «Ոսկան Երեւանցի» հրատ., 2005, էջ 327:  
 7 Նոյն տեղում, էջ 327-328:  
 8 Նոյն տեղում, էջ 80:

գրական բաարար լսարան ունենալու ներքին պահանջի «կողմնակի» խնդրից երբ բախել է միս օջախների նույնքան նեղլիկ դռները, երբ երկիրո՞ւմ կանգնել է մայր երկրի դարպասների առջև:

Նրա մէջ արթուն է ընթերցող, դպրոց կորցնելու վտանգը, այն էլ՝ թիկունքից:

Վիի կայ, որը չի լցում, եւ դա հաւասարագօր է մշակութային աղէտի: Ափսոս որ ահագանգի դողանջները ոչ բոլորի համար են ընկալելի: 20-րդ դարի տասական թթ. սկիզբ առած արեւմտահայ գործուն բարձր համակարգի դանդաղ, բայց աստիճանական փլուզման յարաճուն գիտակցութիւնը, ցաւօք, ոչ բոլոր հանգրուաններում է դիտում կորստեան ծաւալների ճանաչման տեսանկիւնից:

### **բ) Վտանգուած գրական աշխարհի պաշտպանութիւնը**

Մօտեցումների երկրորդ բեւեռը, անհանգստութիւնների նոր բեռը կազմում են արեւելահայ նման դատումների նկատմամբ արեւմտահայ բնաբուխ, յաճախ համարժէք, նույնքան ենթակայական անդրադարձները, անել վիճակներից ծնուած դժգոհութեան սլաքները: Այստեղ խնդիրը ապրող, մաքառող սփիւռքահայի տեսակի, ինքնութեան «փրկութեան» բովանդակութիւնն է: Ամերիկահայ գրականագէտ եւ ազգային գործիչ Երուանդ Ազատեանը ժողովրդի երկու հատուածների ազգային-քաղաքական եւ գրական ճանաչողութեան անակնկալ խիստ գնահատականներով հանդէս եկաւ 2003 թուականին «Օրեր» ամսագրում (Պրահա), իսկ յաջորդ տարի լրացուցիչ բացատրութիւն–մեկնութիւններով նաեւ՝ երեւանեան «Ազգ» օրաթերթում: Առաջին հարցազրոյցում նա բաւական կտրուկ յայտարարում էր, թէ՛ «Արդէն եկել է ժամանակը, երբ մինչեւ հիմա չասուած բաները պէտք է ասենք: Իմ կարծիքով (արեւելահայերի հետ - Մ.Գ.), մեր անհասկացողութիւնների պատճառն այն է, որ մենք երկու տարբեր ազգեր ենք: Հայաստանը Կովկասին է պատկանում, Սփիւքը՝ իր պոլսահայ արմատով եւ զանազան ազդեցութիւններով՝ բոլորովին տարբեր աշխարհ է: Մեզանից անկախ երկու տարբեր ազգութիւններ են ստեղծուել: Արիւնով միեւնոյնը, լեզուով՝ գրեթէ նոյնը, բայց աշխարհայեացքներով՝ գրեթէ հակոտնեայ»<sup>9</sup>:

Սա փաստօրէն արեւելահայ վերաբերմունքի նույնքան ծայրայեղ հակադարձումն է: Յաջորդ հրապարակման մէջ մշակութային զինանոցով խորացնելով տեսակէտը՝ նա եզրակացնում է. «Սովետական շրջանին ինչ որ արեւմտահայ մշակոյթին մէջ կար, համարեայ անտեսուեցաւ: Մեր բոլոր գրական մեծութիւնները միայն արեւելահայ գրականութեան մէջ երեւցան՝ Իսահակեան, Տէրեան, Թումանեան: ...Հայաստանի մէջ չեմ զգացած, թէ նոյն հարազատութեամբ ընդունուած են Վ. Թէքէեանը, Գ. Վարուժանը, Սիւսանթոն: ...Վ. Թէքէեան հանճար է, բայց հոս այդպէս չ'ընկալուիր: Հո՛ւս է մշակոյթներու տարբերութիւնը»<sup>10</sup>:

Անշուշտ, անչափ սրելով ընկալումի անկիւնը՝ Ե. Ազատեանը հակադրուեց Երեւանից բխող առարկայական այն ցանկութիւններին, թէ մենք մէկ ազգ ու մէկ մշակոյթով զօրացող հաւաքականութիւն ենք: Իրական հայրենասիրութիւնը տարանջատման կամ կամրջումի արհեստական ճանապարհներ չի ընդունում, այսինքն՝ ցանկալին՝ իրողութեան տեղ: Այսօր շատ են «Մէկ ազգ, մէկ մշակոյթ» փառատօնային կարգախօսները, որոնք, սակայն, «անուանաբար» չեն լրացնում կիսակատար ցանկութիւնները: Այդ առթիւ դիպուկ օրինակով Ե. Ազատեանը խո-

<sup>9</sup> «Օրեր» համաեւրոպական անկախ ամսագիր, Պրահա, 2003, թիւ 6-8 (25), էջ 12: - Ընդգծումները՝ խմբ.:

<sup>10</sup> Երուանդ Ազատեան, Դիտումներ եւ դատումներ, Եր., հրատ. ԹՄՄ, 2006, էջ 364:

րացնում է ենթաշերտերում թաքնուած մտածումի շիտակութեան դասը. «Ես մէջքերում մը ըրած եմ Պեռնարդ Շուէն, որ կ'ըսէ, թէ ամերիկացիները եւ անգլիացիները միեւնոյն ազգն են՝ բաժնուած նոյն լեզուով: Շատ խորիմաստ բացատրութիւն մըն է: ...Անոնք, որոնք վիրաւորուած կը զգան այս արտայայտութենէն, այն վերագրումը կ'ընեն ինծի, որ ես այդ տարբերութիւնը ընդունող մէկն եմ: Ընդհակառակը, ես այդ տարբերութիւնը մէջտեղ դրած եմ, որովհետեւ մենք մէկ ազգ պէտք է ըլլանք, թէև ժառանգութեամբ, մշակոյթով՝ տարբեր»<sup>11</sup>:

Սա է իրականութիւնը. հայ ժողովուրդը ազգային լեզուական յենքով թէև տարբերակուած, բայց խորքով ճանաչելի ու միասնական կեցութիւն ունի: Պատմականօրէն ձեւաւորուած բովանդակութեամբ, ինչպէս նաեւ մշակութային մտածողութեան մեկուսի դաստիարակութիւններով երկու տարբեր, յաճախ հակադիր շերտերի կրողն է, արտայայտիչը, ասել է թէ՛ հատուածային, ճիւղային ուրուագծումով, որտեղ ազգի մշակութային միասնութեան կարգախօսը ցանկալի է, համախմբումի տեսանկիւնից՝ իբրև ռազմավարական անհրաժեշտութիւն, բայց առ այսօր, ցաւօք, հեռու կենսունակութիւնից:

**Երկշերտութեան մէջ այս հաւասարակշռութիւնն է, որ արհամարհում է արեւելահայ մտաւորականը, ոչ այնքան հեռու անցեալում՝ Վ. Տէրեանը, նորագոյն շրջանում Հր. Մատթէոսեանը, նրանց հայեացքի ծալքերում՝ պաշտօնական այն այրերը, որոնք զլանում են մշակութային երկխօսութեան դուռ բանալ լեզուական եւ գրամշակութային դաշտերում:** Ահա թէ ինչու է յարաբերականօրէն այդպէս շուտ նաեւ «փրբում» գրական պատմութեան մի ամբողջ շրջան, որի թիկունքում ազգային գրականութեան արեւմտեան հարուստ ժառանգութիւնն է՝ պարբերացումներով, ազդեցութիւններով, շարժումներով, վերելքով ու բազմերես նահանջներով:

**զ) Միասնական ակունքից դէպի տարանջատման քայլեր**

Մինչդեռ 19-րդ դարի առաջին կէսին ամէն ինչ այնքա՛ն լուսաւոր ու անրջական էր թուած՝ միասնութեան դիրքերից, գրական հայերէնի երկու մակարդակներով ուրուագծուած միջավայրերում ծնունդ առան իրար շաղկապուած գրամշակութային աւազաններ, որոնք, սակայն, զգալի տարածութեան վրայ զատուած էին նիստուկացով, բարոյաբանութեամբ, հոգեբանութեամբ: Դրանց թերեւս գումարենք քաղաքական հակադիր միջավայրերի՝ ռուսական ու թուրքական, առանձին-առանձին թելադրիչ սնուցումով պայմանաւորուած սուր քաղաքական եւ մշակութային գործօնները, որտեղ «ռուսականը» ինքնակալութեան թոյլ քաղաքական տրոփի կողքին բերում էր ազգային գրականութեան զարգացման բարեբեր նախադրեալներ, իսկ ահա «թուրքական» հատուածի խորքում, հայահալած քաղաքական ծրագրի հրեշաւոր պայմաններում, բարձր մշակոյթի ներգործութիւնը միջնորդաւորուած էր. հայ գրականութեան առջեւ ֆրանսիական եւ եւրոպական իւրացումներն էին, որոնք եւ սպահովում էին ազգային գրական աննախադէպ վերելք՝ 20-րդ դարասկզբին:

Միեւնոյն շրջանում արեւելահայ եւ արեւմտահայ գրական հատուածները տարանջատման թեթև շղարշներ էին կարգում մեզանում՝ մէկ գրականութիւն, սակայն գրական երկու, յարաբերականօրէն ինքնուրոյն թեւերով ճիւղաւորումներ: Յարաբերականօրէն, քանի որ սնուցման ազգային-պատմական աղբիւրը մնում էր միասնական: Քսաներորդ դարասկզբին ազգային գրական զարգացումները,

11 Նոյն տեղում, էջ 363-364:

Քիվ 3(28) հոկտեմբեր-դեկտեմբեր 2009

ՎԵՄ համահայկական հանդես

միասնական հետաքրքրություններով հանդերձ, ներքին, յաճախ անտեսանելի մր-  
ցակցութեան հովեր էին ձեռք բերում, որոնք ժամանակ առ ժամանակ խորացնում  
էին երկու թեւերի միջեւ եղած բաժանարար գծերը:

Խորհրդահայ եւ արեւմտահայ ձեւափոխուող գրականութիւնների միջեւ տա-  
րանջատումի միտումները խորացան ու որոշակիացան հենց 20-ական թթ. սկզ-  
բից, քանի որ ստացան նաեւ համայնավար քաղաքական համակարգի անհան-  
դուրժող յանձնարարական-վարքագիծը՝ որքան հնարաւոր է լուսանցք մղել  
արեւմտահայ գրամշակութային դաշտի ազդեցութիւնը, հեռու պահել արեւելահայ  
մշակոյթը ազգային մտքի գերիշխանութեան փորձերից, երբ նախապատուութիւ-  
նը կենտրոնանում է ազգային բովանդակութեան իմաստների վրայ. չէ՞ որ գրակա-  
նութեան մէջ այլեւս «ազգայինը» միայն ձեւ է՝ «սոցիալիստական» բովանդակու-  
թեան դիմաց:

Դա ժամանակին նկատեց ու խորքով բացայայտեց Շ. Շահնուրը իր «Չաթոսքէ»  
պատմուածքում եւ «Լեզու սրբազնագոյն» փորձագրութեան մէջ: Նա ցաւ ապրեց  
հայութեան երկու հատուածների միջեւ լեզուական ու մշակութային անըմբռնողութե-  
ան համար, որի քաղաքական գատումի նախահիմքերը ելնում էին խորհրդային  
գաղափարաբանութեան նախապայմանից, ինչից կառչում էին՝ «քոյրերին ու  
եղբայրներին» հրելով հեռացումի վիհը: Սինչդեռ Շ. Շահնուրի յիշատակած  
«դաշնակցութեան թոյնը» ազգային ինքնութեան մնացորդ վկայութիւնն էր. «Եթէ  
առողջ ըլլայիր, դո՛ւն, գաղթահայութիւն, մենք քեզ տուն կը կանչէինք, Հայաստանի  
դռները կը բանայինք քու առջեւ: Բայց դուն հիւանդ ես: Դաշնակցութեան թոյնով  
վարակուած ես, դո՛ւն, գաղթահայութիւն: Եւ մենք կը թողունք, որ մնաս օտարութե-  
ան մէջ, մինչեւ այն օրը...»<sup>12</sup>: «Վտարուած» Պէաթրիսը խորհրդանշում էր արեւմ-  
տահայ ինքնութեան դատապարտուածութիւնը՝ խորհրդայինի կրնկի տակ:

Շ. Շահնուրի հեզմանքը մահից քիչ առաջ գրուած՝ «Լեզու սրբազնագոյն»  
փորձագրութեան մէջ քաղաքական լիցքեր այլեւս չունի. այն ամբողջապէս «մշա-  
կութային» է: Իր դիմաց Անդրանիկն է՝ Անդրանիկ Ծառուկեան բանաստեղծը, որի  
ուսին ժամանակին նստել էր «սպիտակ աղանիւն», այսինքն՝ նա տաղանդաւոր  
գրիչ էր, իրական յոյսեր էր ներշնչում: Նրա քննադատական սլաքը ուղղուած է  
հենց արեւմտահայ նորերի մէջ վաղուայ հաւատի թուլացման դէմ: Անդրանիկն է,  
որ հրաժարում է «աղանիւնից»՝ բաւարարուելով միայն «հաւկիթներով». «Իմ  
արեւմտահայերէնը փտուկ է եւ ոչ թէ կատարեալ<sup>13</sup>: Մեր լեզուն դատապարտուած  
է կորստեան»: Սինչդեռ Շ. Շահնուրը Պոլսոյ գրի հրաշքն է բացում նրա յուսա-  
հատ վիճակի առջեւ՝ որպէս մշակութային փրկութեան պատուհան. «Տե՛ս՝ ոչ մէկ  
բառ չէ կորսուած: Ուրեմն, օ՛ն անդր յառա՛ջ, գրէ՛ քու հարուստ լեզուովդ, քու ներ-  
դաշնակ նախադասութիւններովդ, արտադրէ՛, հոգիդ սիրեմ, ստեղծագործէ՛»<sup>14</sup>: Եւ  
առաջին հերթին՝ ի՛ր առջեւ. «Բայց ես դադրած էի զինքը լսելէ: Ամբողջ էութեամբս  
կ'ըմբռշխնէի Պոլսոյ հարազա՛տ լեզուն, որուն այնքա՛ն կարօտն ունէի ...աշխար-  
հի գեղեցկագոյն, աշխարհի սրբազնագոյն լեզուն, մեր աշխարհաբարը»<sup>15</sup>:

Հեզմանքը արեւելահայերէնի հարցում վերջինիս գերիշխանութեան դէմ Շ.

12 **Շահան Շահնուր**, Երկեր երկու գրքով, Գիրք առաջին, Եր., «Սովետական գրող», 1982, էջ 273:  
Դաշնակցութեան «բացասական» անուանումը նպաստեց խորհրդային Հայաստան պատմուածքի  
անվերապահ մուտքին. Շ. Շահնուրը «խաղի բերեց» հայրենի աշաւուրջ գրապահակներին: Դա եզակի  
երեւոյթ է:

13 **Նոյնը**, Սիրտ սրտի, Փարիզ, 1995, էջ 270:

14 **Նոյն տեղում**, էջ 273:

15 **Նոյն տեղում**, էջ 273-274:



Շահնուրի ընդվզումի, պոռթկումի արտայայտության ձեռք է: Ա. Ծառուկեանը, ասել է թէ՛ հայրենի երկրին փարուած սփիւռքահայ մտաւորականը, Հայաստանի հետ կապով է, որ կորցնում է վստահութիւնը «Պոլսոյ լեզուի» կատարելութեան հանդէպ<sup>16</sup>, որ արեւմտահայ մտածումը «հիւծած է եւ մաշած», «Կաղանդէն առաջ իր մտածումը կ'երթար-կու գար, իսկ հիմա գնում-գալիս է»<sup>17</sup>:

Այստեղ կ'ուզենայինք առանձնացնել սփիւռքահայ գրականութեան պատմութեան ամփոփիչ գնահատութեան երկու կարեւոր հանգամանք, որոնք կարող են մեթոդական բանալի լինել տարբեր առանցքային եւ անգամ խաչաձեւ հարցադրումների ժամանակ: Առաջին ամփոփիչ գիտական տպաւորութիւնը վերաբերում է նրա ծագումնաբանական խնդրին: Մեր առջեւ գրականութեան դերի ճանաչման նշանակութիւնն է. այն սկզբից եւեթ միտում է դառնալ բզքտուած արեւմտահայ գրականութեան ընթացքների «վերականգնումի» իւրատեսակ յաջողուած բացառիկ փորձ, ստեղծագործական թռիչքի համար աշխարհի տարբեր անկիւններից թեւերը հայօրէն բացելու, վերագարթումի կամային հզօր քայլ: Օրինակը, ընդունենք, բացառիկ է համաշխարհային գրական խորքի վրայ՝ **պատաստիկներից վերստեղծում է գրական կոտորակուած աշխարհը, մերժում է մահուան դատակնիքը:**

Արեւմտահայ դասական գրականութեան պատառոտուած դրօշները, նոր փայլ ստացած, սկսեցին փողփողել 20-ական թթ. վերջերից, բայց այս անգամ՝ աշխարհի տարբեր անկիւններից՝ նոր բովանդակութեամբ, վերապրումի երջանիկ, բայց անանձնական այն զգացողութեամբ, որ գրողի լիապարար ձայնը ժողովրդի լինելութեան վկայութիւնն է: **Վերապրում է հայրենի եզերքից փրթած ժողովուրդը, կա՛յ նրա գրականութեան թրթիռը:**

Անցնենք երկրորդ հանգամանքին: Գրական հարուստ նիւթի մշակման տեսակետից ներքին մի գործընթաց, պէտք է ասել, գրաւում է առարկայական ուշադրութիւն: Դա հայ Սփիւռքի գրական հարցադրումների անընդմէջ կաղապարումի եւ էմանսիպացիայի մղման արտայայտութիւնն է: Նախ, «կողմնակի» մէկ հարց՝ ինչո՞ւ «կաղապարում»: պատասխանն անմիջական է. որովհետեւ սփիւռքահայ գրականութիւնը, յատկապէս ձեւաւորման շրջանում, չէր կարողանում ձեռքբազատուել ցեղասպանութեան բարդոյթից, տարագրութեան հալածական պատկերներից եւ ողբերգական խղճի յարատեւութիւնը գրական հանգոյցներում համարում էր առաջնային առաքելութիւն: Նա աշխարհին ձգտում էր բացել իր ողբերգութիւնը՝ որպէս չճանաչուած ցեղասպանութեան դատապարտում, որպէս յետագայ ցեղասպանութիւնների կանխարգելման եղանակ: «Կաղապարումը» այստեղ նիւթերի մատուցման շրջանակում որակուած էր որպէս միակողմանիութեան հոմանիչ:

Այնուհանդերձ սփիւռքահայ գրականութեանը բնորոշ է զարգացման ուրիշ, թուած է, ատելի շահեկան օրինաչափութիւն: Այն որոշ պայմանականութեամբ կարելի է անուանել անընդմէջ «էմանսիպացիա» պատմութեան թելադրանքից, այսինքն՝ հոգուն պարտադրուած գրական հայրենասիրական առարկայական նիւթերի քննութիւնից ազատագրման ներքին ձգտում, որը նրան ե՛ր յաջողուած է, ե՛ր չի յաջողուած: Խօսքը վերաբերում է գեղարուեստական գրականութեան մէջ քննական պատմութեան չափաբաժնի նուազեցմանը, անշո՛ւշտ՝ ազգային ճանաչողութեան տրամաբանութեան սահմաններում, բայց ոչ յիշողութեան նուազեցման հաշուին:

Սփիւռքահայ գրականութեան ամբողջական մուտքը Հայաստանում արգելա-  
16 «Սիրտս կ'արհնես, ըսաւ, այլեւ չեմ կրնար»: Կցկոտոր բառերով բացատրեց, թէ զինքը հասկցող  
չկար, **Նոյն տեղում**, էջ 273:  
17 **Նոյն տեղում**, էջ 272:

փակուած էր: Գրական վիթխարի ծաւալների յապաղած «ներխուժումը» չէր կարող, սակայն, երկար ժամանակ մնալ մեկուսի ու առանձին անքնական վիճակներում, չմիանալ գրականութան ազգային մայր գետին, նրա շարունակական յորձանքին: Այդ ամբողջական ներխուժումը եղաւ, յիրաւի, յորդաբով, այն դեռես լիապէս «տարրալուծուած» չէ, նորոգ ճանաչման շերտերը, ինչպէս ասում են, «ջրերի երեսին են», հանքի մակերեսին, խորքային թափանցումները սակաւաթիւ են, այսինքն՝ իմաստաւորման, խորհրդային գրական ընթացքների հետ համարական գնահատութեան ճանապարհին, եւ գրապատմական շատ արժեւորումներ ու վերարժեւորումներ են առջեւում սպասում գրական հանրութեանը: Գրողների ստուար խմբեր ու առաւելապէս ստեղծագործութիւններ դեռ «փնտռում-գտնում են» իրենց սահմանուած տեղը ազգային գրականութեան բազմաշերտ համարնագրում: Այժմ կարծես մի կողմ են քշուած խորհրդային ժամանակների քաղաքական եւ գաղափարական տարանջատ մօտեցումները, քանի որ օրակարգում XX դարի հայ գրականութեան միասնական պատմութեան գիտական ճանաչողութեան գերխնդիրն է, քանի որ, պէտք է ընդունել, որ սփիւռքահայ գրականութեան պատմութեան գիտական առաջադրութիւնը փոխում է գրական նորագոյն շրջանի պատկերացումների համակարգը եւ աւելին՝ փոխում է նրա ընթացքների հունը:

Թերես այս ամէնի բարձրագոյն եւ գիտակից խտացումը տրուած է հայ արձակի անգուգական վարպետ Շահան Շահնուրի «Յարալէզներու դաւաճանութիւնը» ծրագրային պատմուածքում համանուն ժողովածուից (Փարիզ, 1933): Նրա քննական հերոսը կանգնած է անցեալի՝ յիշատակների, եւ ներկայի՝ դէպի կեանքի յորձանք մղուելու երկընտրանքի սահմանագծին: Ո՞ր կողմ շարժուել. մի կողմում՝ մեռելներն են, որ կանչում են իրեն, միւսում՝ ապրելու ճանապարհը, որն իսկապէս մտահոգում է իրեն, աւելին, քան Աստուած. «Հաւանաբար, Աստուածը միայն պարապն է, բացարձակ պարապը»<sup>18</sup>, - եզրակացնում է հեղինակի հաւաքական հերոսը՝ լցուած, ներծծուած ժողովրդական իմաստութեան տարերքով:

Շ. Շահնուրը այս պատմուածքում պարզ ու բարդ խորհրդանիշներով ուրուագծում էր Սփիւռքի հայութեան մթաթ ներկան ու տատանութիւնները, բայց եւ վճռականութիւնը՝ յաղթահարելու մահը, ընտրելու գոյութեան փիլիսոփայութիւնը՝ իբրեւ գերիրապաշտ մտածողութեան եւ իրեն ծնող կենսունակ ժողովրդի ճանաչողութեան անտես, բայց փրկարար դաշինք:

Մահուանն այդքան մօտ կանգնած հերոսը, «...որ օր մը իսկ չէր անցրնէր առանց հայութեամբ տառապելու»<sup>19</sup>, գուցէ հենց մահն էր տենչում, բայց գտաւ կեանքը, «գտաւ ու կառչեցաւ անոր»<sup>20</sup>: Դժուարին էր մահից կեանք այդ ճանապարհը, «գրականութիւն» չէր. «Կը կարծէր տրամաբանութեամբ, դատաստաններով, այսինքն՝ իր արթուն ետովը յառաջանալ, մինչդեռ կը յառաջանար ամենահասարակ եւ ամէնէն աւելի մարդկային ինքնապաշտպանութեամբ մը: Մութովը»<sup>21</sup>:

Շ. Շահնուրի պատկերը բացում է ոչ այնքան անհատի, որքան ազգային հաւաքականութեան դեգերումն ու ընտրութիւնը խորշակից անմիջապէս յետոյ: Պատկերի ընդլայնման այլաբանական խորքում, ըստ էութեան՝ սփիւռքահայ, Լ. Շանթի կազմած ուշագրաւ բառով՝ «ցրումի» գրականութեան ձեւաւորման ընթացքն ենք որսում:

18 Շահան Շահնուր, Երկեր երկու գրքով, գիրք Առաջին, Եր., 1982, էջ 304:

19 Նոյն տեղում:

20 Նոյն տեղում:

21 Նոյն տեղում:

Այդպէս, հոգու ընթացքի «մթութեամբը ահեղ» (Վահան Թէքէան), յարատեւեց սփիւռքահայը՝ «հայու յոգնած հոգին», թէկուզ օտար հորիզոնների տակ, բայց գտաւ իրեն, գտաւ ու վերապրեց մարդկայինը կեանքում, խաղարկեց հերոսականը երազներում: Եւ եթէ պանծացրեց, վեհացրեց մի բան, ապա դա իր ապրող յիշողութեան մախաղն էր, ծնողներից ստացած պատգամ-ժառանգութիւնը:

Այդպէս ճանաչեց իրեն մաւ գրականութեան մէջ՝ դառնալով նրա մեռնող ու յարութիւն ապրող գլխատր հերոսը:

**դ) Սփիւռքահայ գրական ընթացքների համակարգը**

Սփիւռքահայ գրականութիւնը արեւմտահայ կենաց ծառի բազմաճիւղ է երփնագոյն աշխարհն է, ըստ էութեան՝ արմատից փրթած, օտարատունկ նոր շիւ, որի յատկանիշերը, երկարակեաց փորձառութիւնը միայն համեմատական լոյսի տակ կարելի է որսալ: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներից մինչեւ մեր օրերը միլիոնատր փախստականներ՝ պարբերաբար աշխարհի ամենատարբեր անկիւններում ապաստան որոնող ժողովրդի «մնացորդացը», ինչպէս նրան դիպուկ բնորոշել է Յակոբ Օշականը, անլուր տառապանքներ է կրել, սակայն կարողացել է «այլոց» միջավայրում վերստեղծել ու պահպանել կենսագործունէութեան իր հիմնարկները, այդ թում՝ գրամշակութային ենթահողը:

Սփիւռքահայ գրականութիւնը ազգային խոր վերքի անմիջական ծնունդն է, միաժամանակ՝ մեր հպարտութեան ցուցիչը, ապրելու հաւաքական կամքի հրաշալի մէկ արտայայտութիւն:

Վերքի հասկացութիւնը, բնականաբար, առարկայական է՝ կապուած անցեալ դարասկզբի եղերական իրադարձութեան եւ տարագրութեան փաստի հետ, երբ արեւմտահայ ժողովրդի հիմնական գանգուածը ծրագրուած ջարդերի, հալածանքների հետեւանքով լքեց բնօրրանը եւ ուղղակի իմաստով սփռուեց ողջ աշխարհով:

Սփիւռքահայ գրականութիւնը ձեւաւորուեց, ահա՛, այս իրողութիւնների գեղարուեստական իմաստաւորման առաջին փորձերից:

Մասնատուած արեւմտահայ գրականութեան վերակենդանութեան հրամայականը կար ամենուրեք, ուստի տարբաժան հատուածների վերընձիւղման տեսլականը առաջացնում է հպարտութիւն գոյատեւումի, կամային զօրութեան հանդէպ: Այդ հպարտութիւնը թում է համընդհանուր. չնայած ստացած հարուածի ուժգնութեանը՝ լքուած հայը, արդէն՝ սփիւռքահայը, օտար միջավայրում տարիների շուարումից յետոյ կարողանում է վերագտնել իրեն մաւ՝ ազգային-հոգեւոր արժէքների պաշտպանութեան առումով: Հիացնողը հայօրէն յարատեւելու նրա յամառութիւնն է:

Ոգու արժեւորման տեսակէտից մեր նշած հպարտութիւնը վերաբերում է առաջին հերթին վերապրած գրողների հաստատականութեանը՝ շարունակելու, տէր կանգնելու ընդհատուած մշակոյթին, ինչը մի մասի մօտ գուցէ եւ ենթագիտակցութիւն էր, իսկ միւսների համար՝ ազգային-մշակութային սրուած առաքելութիւն: Ինչ վերաբերում է արեւմտահայ գրականութեան նոր զարգացումներին, ապա պէտք է ընդգծել, որ միակենտրոն Պոլսի փոխարէն ի յայտ են գալիս «տեղական նշանակութեան» բնոյթի, գրական մայրաքաղաքների մանր-փոքր յաւակնութիւններով սնուող նոր կենտրոններ՝ Պոստոն, Փարիզ, Պէյրութ, Նիւ Եորք, դարձ ի շրջանս իր՝ անգամ Ստամբուլ... Բժախնդիր լինելու դէպքում քաղաքների շարանը կարելի է ձգել:

Ի տարբերութիւն մեծ ժողովուրդների արտագնայ նման շարժի եւ ժամանակի

թիվ 3(28) հոկտեմբեր-դեկտեմբեր 2009

ՎԵՄ համահայկական համերկ

մէջ տարաբնոյթ համալրումների՝ Սփիւռքի հայկական կղզեակները գոյատրուել են բռնագաղթների, տեղահանութեան ու սպանդի հետեւանքով, իսկ սա, ընդգծենք, մեր Սփիւռքի կազմաւորման կենսական իւրայատկութիւնն է:

Փոքր ժողովուրդների համար, սակայն, Սփիւռքի առկայութիւնը պարունակում է առարկայական եւ ներթաքոյց բազում վտանգներ, որոնցից ամենասարսափելին տարրալուծումն է, պոլսահայ բանաստեղծ Չահրատի արտայայտութեամբ՝ «ուրիշներով շինուած հսկայ ծովուն մէջ» անհետանալու, կորսուելու իրատես վախը:

Պատմական միջոցի տեսակէտից գաղթագնայ ուղիները տարածում էին անկանոն արագութեամբ: Հիմնականում նոր կարաւանների կազմաւորման շնորհիւ վերագծում էին հայ գաղթավայրերն ու գրամշակութային օջախները Եւրոպայում, մերձարեւելեան երկրներում, ամերիկեան աշխարհամասում: Չեւաորումն ընթանում էր տարագրութեան դաժան «կանոններով», բնական դարձած ֆիզիքական եւ հոգեւոր կորուստներով. հայկական համայնքները համալրում էին յախուռն թափով, արագընթաց ընդարձակում էր նաեւ նրանց «աշխարհագրութիւնը», ինչի հետեւանքով արեւմտահայ միասնական գրականութիւնը տրոհում էր մեծ ու փոքր կղզեակների:

Սփիւռքահայ գրականութիւնը մենք տեսնում եւ քննում ենք՝ որպէս գրական այնպիսի երեւոյթ, ուր համայնքների առանձին, մասնատուած ճանաչումը չի կարող յաւակնել ընդհանրացուած գնահատութիւնների: Այստեղ առաջին հերթին նկատի ունենք գրական զարգացման հունը:

Մենք միասնական ենք, քանի դեռ կայ ճակատագրի ընդհանրութեան, գաղութից գաղութ օտար ընկերային ու մշակութային հրապոյրների դէմ ազգային համախմբումի գիտակցութիւնը: **Ինչպէս նշել ենք, միասնական գրականութեան տեսիլը, ամբողջական հայ գրականութեան ընդգրկումով, եղել եւ մնում է վաղ թէ ուշ լուծման կարօտ գիտական նպատակակէտ:**

Նոյն գրական բովանդակութեան ծիրով մենք որսում ենք ճակատագրի ընդհանրութեան, գաղութից գաղութ օտար ընկերային ու մշակութային հրապոյրների դէմ ազգային համախմբումի գիտակցութիւն:

Դա օգնում է քննութեան առնելու մի ցաւոտ խնդիր եւս, որը ժամանակին հետաքրքրել է նաեւ գրականագէտ Մինաս Թէօլէօլեանին, թէ ինչու հայ գրողները միջազգային գեղնի վրայ իբրեւ հայ հեղինակ չեն երեւում իրենց գործով, ստեղծագործական արժէքով: Պատասխանը ամերիկահայ գրագէտը որսում է սփիւռքահայ գրականութեան օրինակով ազգային ինքնութեան երեւոյթի մէջ. «Այդ ակնկալութիւնը չենք կրնար ունենալ, որքան ատեն որ մեր ժողովուրդը իր հասարակաց միջինով իւրացուցած չէ ներգործութիւնը մարդկային ընկերութեան մէջ հաստատելի նոյն այդ խմորումներուն, հոսանքներուն, ձգտումներուն եւ իրագործումներուն: Հայկական Արտասահմանը, ինչպէս երէկ, նաեւ այսօր, մեր ժողովուրդի գրեթէ բնագոյական հակազդեցութեամբ, բայց մանաւանդ ընկերային իր կեանքի, հոգեկան կառուցուածքի եւ «ազգային սահմանափակութեան» մղումով՝ ինքն իրմով կ'ապրի եւ իր պայմաններով միայն կրնայ իմացական կեանք գոյատրել»<sup>22</sup>:

Վերադառնանք գրական երեւոյթի ընկալման խորհրդին, երբ ակնբախ էր այլեւս Սփիւռքի յախուռն կազմաւորման արշալոյսը հայութեան հոծ «ճամբարներում»: Ի հարկէ, տեսական մի ժամանակաշրջան դրսետորուել են քաղաքական շահագրգռութիւններից բխած բեւեռացումներ, ծայրայեղութիւններ, ատելութիւն

22 Մինաս Թէօլէօլեան, Դար մը գրականութիւն (1920-1980), Բ. հատոր, Նիւ Եորք, «Ոսկետառ», 1977, էջ 29:

նից մինչեւ կոյր պաշտամունք ծաւալուող ոչ իրատեսական գնահատականներ գրամշակութային երկու հատուածների փոխառնչութիւնների շուրջ:

Այսպէս, Սփիւռքի մի զգալի մասը խորհրդային կարգերի հաստատումն ու տեւական գոյութիւնը դիտեց բռնադատութիւն ազգային ինքնութեան վրայ, ազգային վառ ձգտումներից պարտադրուած նահանջ: Յիրաւի, գաղափարի բիրտ ամբողջատիրութիւնը հին ու նոր կայսրութիւնների յատկանիշերի շաղախ ունէր, եւ դա խորութեամբ հասկանում էին Սփիւռքում, անգամ նրանք, ովքեր, երբեմն ակամայ, Խորհրդային Հայաստանի ջերմ պաշտպաններն էին:

Հայոց գաղթաշխարհի փոխթափանցիկ եւ յարափոփոխ սահմանները, թում է, յիշեցնում են աշխարհի քաղաքական քարտէսը՝ ո՛ր ասես հայ չկայ: Ի դէպ, արձակագիր **Վահրամ Մավեանի** ժողովածուներից մէկն այդպէս էլ կոչուում էր՝ «Ամէն տեղ հայ կայ»: Խայտաբղետ է Սփիւռքի գրամշակութային կորը: Ամէն դէպքում, բոլոր հնարատր բացառութիւնները աչքի առջեւ նկատի ունենալով, պէտք է հաստատագրել մի ճշմարտութիւն. **սփիւռքահայ գրականութիւնը արեւմտահայ գրականութեան շարունակութիւնն է**, բայց այլեւս լուսանցքի վրայ, յաճախ պատահականութիւններին ու բախտի քմահաճոյքին յանձնուած: Երկրորդ հետեւութիւնը բխում է առաջինից. **այն միասնութեան զարմանահրաշ ձգողութիւն ունի:**

Սփիւռքահայ համայնքների ձեւաւորումի մէկընդմիշտ տրուած անշարժ վիճակներ գոյութիւն չունեն. «կարաւանները դեռ քայլում են», ինչպէս կ'ասէր բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկեանը: Մեր գաղթօջախներին բնորոշ են աշխոյժ եւ անընդհատ ձեւափոխման հակումները: Տասնամեակների ընթացքում արեւելաւերոպական ու մերձարեւելեան մեր համայնքները ենթարկուում են նշանակալի փոփոխութիւնների, յաճախ նաեւ՝ նոր տազնապ, հալածանքներ, ճակատագրերի բեկում՝ կապուած այս կամ այն երկրի պատմաքաղաքական անակնկալ զարգացումների հետ:

Սփիւռքի յատկանշային կողմերից մէկը, այսպիսով, հայ կղզեակների ներքին կեանքի անընդմէջ փոփոխուող բնոյթն է՝ «պարպուելը եւ լցուելը», այսինքն՝ **պատմական տեղաշարժերը**, որոնք անկանխատեսելի են, երբեմն էլ՝ պատմութեան տրամաբանութեանն անհարիր: Տեղաշարժերը պայմանաւորուած են տուեալ երկրների քաղաքական կացութեան եւ մշակութային կրթութեան աստիճանով, պատմաքաղաքական զարգացումներով, ազգային փոքրամասնութեան նկատմամբ տեղական վերաբերմունքով, կեանքի մէջ համայնքի ներգրամման սահուն կամ գիրթ ընթացքով: Հոգեբանական տարընթաց վիճակները՝ անհամակերպութիւն, կորուստ, «խրտչում» եւ ինքնակաղապարում, դիպուկ է մեկնաբանում նոյն Մ. Թէօլէօլեանը՝ գտնելով. «Հայկական Արտասահմանի գրական կեանքը վերջին քսան տարիներուն ու յատկապէս այսօր (իմա՝ անցեալ դարի 60-80-ական թթ.-Ս.Գ.) ուղիղ կը համեմատի տարասփիւռ մեր համրանքի առօրեայ շնչատ վագրին, անկայուն ու անստոյգ կացութեան, տազնապանքին ու մանաւանդ հիմնատր թէ արուեստական բոլոր այն ցնցումներուն հետ, որոնք հոգեպէս ճնշումի տակ կը պահեն մեզ, յաճախ կը ցամքեցնեն ապրումի ու ներշնչանքի աղբիւրները... 1940-էն ասդին մարդկային կեանքը եւ զայն ապրելու ոճերը... տասնապատիկ աւելի արագութեամբ կը փոխուին,- կը յեղաշրջուին՝ պիտի ուզէինք ըսել: Խելացնոր թափով մը կ'աճին ու կը դադրին «կեանք» մը ըլլալէ: Կը դառնան խենդութիւն եւ ըմբոստութիւն, մարդը իր բոլոր տեսակի դասական իմացումներէն ազատագրելու եւ ընկերային ամէն հակակշռէ ձեռքազատելու յեղափոխութիւն: Արդ, այնքա՛ն մօտիկ այս սանձակոտոր հեւքերուն ու այնքա՛ն օտար՝ այդ հեւքերը թափահարող

թիվ 3(28) հոկտեմբեր-դեկտեմբեր 2009

ՎԷՄ համահայկական համոյն

նոր շարժումներուն, մեր օրերու հայ գրագէտը տեսակ մը խրտչումի մէջ կ'ապրի. կ'ապրի տեսակ մը մեծ զարմացումի մէջ, որ բնագոյարար զինք դէպի իր «ածու»ն կը մղէ,- դէպի ակունքը «ազգային իր սահմանափակութեան»<sup>23</sup>:

Հայ նորագոյն Մփիւռքի անընդմէջ վերածնունտն սուր փոփոխական յատկանիշերը մեկնութեան նոր սահմաններ են բացում: Բանն այն է, որ սփիւռքահայ գրողը պարտադրուած էր զգում ճշտելու իր տեղը, թէկուզ հապշտապ, բայց անպայմանօրէն իմաստաւորելու անցեալը. եղեռնի բերած տառապանքը շրջում է միագիծ ըմբռնումները ժողովրդի եւ աշխարհի մասին առհասարակ: **Այստեղից՝ թեթև ազգային, շղարշը, որ իջել է սփիւռքահայ գրականութեան վրայ:** Սա նրա ձեւաւորման մասնաշատկութիւններից է:

Ժամանակակիցներն այսպէս թէ այնպէս գիտակցում էին, որ **Մփիւռքի գրականութիւնը բորբոք վիճակներում ձեւուած, յաճախ ազգային-քաղաքական սուր լիցքեր ստացած գեղարուեստական հայեացք է**, որն իր մէջ փորձում էր անմիջապէս ներառել պատմութեան գնահատականները: Եւ դա բնականօրէն բխում էր նրա ծագումնաբանական յատկանիշից:

Այդպէս չէ՞ր միթէ ոչ վաղ անցեալում դասական գրականութեան պարագան: Ուստի բնական պէտք է դիտել յայտնի պատմաքաղաքական ողբերգական երեւոյթների (եղեռն, տարագրութիւն, կարօտ, յուսահատութիւն՝ վերադարձի անհնարիւնութեան յարաճուն գիտակցութիւնից, նահանջ հայութեան աւազանից) արժեւորման ջղածիգ, հապճեպ, այսպէս կոչուած՝ «տաք» մօտեցումները:

Տարագիր գրականութեան իւրայատկութիւնը արդէն նրա **ազգային հարցադրումների շեշտադրումն է:** Մփիւռքահայ գրամշակութային գծի վրայ պէտք է նկատի ունենալ արանդական կուսակցութիւնների, քաղաքական-ընկերային շարժումների ու հոսանքների խաղացած էական դերը՝ նոյնիսկ միտումի, կողմնորոշումի երբեմն ծայրայեղութեան հասնող դրսեւորումներով հանդերձ: Եւ եթէ անգամ թռուցիկ ակնարկ ենք նետում սփիւռքահայ գրականութեան էական միտումներին, ակնբերել է դառնում տրամաբանական հետետեւութիւնը՝ այն եղել էւ մնում է իբրեւ հայադրոշմ կեցութիւն, իբրեւ պատնէշ՝ ուժացումի եւ նահանջի, իբրեւ ազգային արթմնի յիշողութիւն: Այս ելագծով շարունակելով գրական կեանքի օրինակափութիւնների ու մասնաշատկութիւնների փնտռտուքը՝ կարելի է հետեւցնել, թէ յատկապէս ձեւաւորման շրջանում **սփիւռքահայ գրականութիւնը նկատելիօրէն գաղափարացած գրականութիւն է:**

**Մփիւռքահայ գրականութեան մէկ այլ իւրայատկութիւնը նրա անհամաչափ, թռիչքաձեւ զարգացումն է**, ինչն արտայայտուած է այս կամ այն օջախի քաղաքական-մշակութային շնչառութեան տեսանելի խորքի վրայ:

### **ե) Պոլսոյ գրական հին ու նոր կոչնակները**

Առաջինը Պոլիսն է՝ Ստամբուլը, 20-30-ական թթ. արդէն մարելու հակումը գրական ուստան, որը ցատկ նկատում էին Պօղոս Մակինցեանը 1924-ի աշնանը «Մարտակոչ»<sup>24</sup> էջերում եւ Եղիշէ Չարենցը 1925-ի յունուարեան առաջին օրերին Ալեքսանդր Մեսանիկեանին յղած նամակում: Ե. Չարենցի պարագան մի փոքր այլ է.

23 **Նոյն տեղում**, էջ 33:

24 Քաղաքական եւ մշակութային յայտնի գործիչ Պօղոս Մակինցեանը ոչ միայն նկարագրում է հայութեան թշուառ վիճակը, Ստամբուլում, այլեւ տալիս է քաղաքական բարարար գնահատական, թէ ինչի հետեւանք է նման կացութիւնը՝ գրելով. «Այստեղ մենք կը յիշենք այդ մամուլի կատարեալ անսկզբունք եւ անբովանդակ վիճակը, որ պէտք է բացատրել ոչ միայն մտաւորականների բացակայութեամբ, այլեւ գերազանցօրէն Պոլսի արդի քաղաքական պայմաններով եւ փոքրամասնութեան ողբալի կացութեամբ», «Մարտակոչ», Թիֆլիս, 1924, թիւ 89, Ապրիլ 17:

նա գրում էր սարկազմով, բայց հիմնականում՝ ճշմարիտ շեշտերով. «Թէ որքա՛ն ողորմելի է այստեղ հայ գաղութի կեանքը՝ դժուար է պատկերացնել. – մարդիկ պարզապէս քարշ են տալիս ստուերային խղճով մի գոյութիւն»<sup>25</sup>: Իսկ մօտեցման իրաշատկութիւնը բխում էր անակնկալից, որին բախտել էր բանաստեղծը. ընդամենը երեք տարի առաջ այստեղ էր Յովի. Թումանեանը: Եւ ի՛նչ ջերմ ընդունելութիւն, ի՛նչ բնաբուխ սէր. մտատրական լիարժէք հասաքոյթներ էին, աշակերտների ասմունք, գրքի հրատարակութիւն, ընդ որում լրագոյնը՝ նրա կեանքի օրօք: Հայ Պոլիսը, յիրաւի, շնչում էր Թումանեանով: Ե. Չարենցի պարագային Խորհրդային Հայաստանի ներկայացուցչի պաշտօնում Արտաշէս Կարինեանին փոխարինած Դանուշ Շահվերդեանը յուշում է, որ անցել են զինադադարի տարիները, այլեւ այստեղ չեն Հայարտի՝ «Գեղարուեստական Տան» նախաձեռնող խմբի անդամներ Հ. Արսէն Ղազիկեանը, Հայկանուշ Մառքը, Երուանդ Օտեանը, Յակոբ Օշականը, Վահան Թէքեանը, Կոստան Չարեանը, Յակոբ Սիրունին, Արշալիր Շահխաբունին, Փանոս Թերլեմէզեանը, Սկրտիչ Ջանանը, Շահան Պէրպլերեանը. «Պոլիս հասնելուս պէս ես ուզեցի կազմակերպել մի-երկու դասախօսութիւն, բայց Շահվերդեանը պարզէ ի պարզ խորհուրդ չտուեց. – ոչ ոք չի գայ, ասա եւ պարզաբանեց իր տեսակետը՝ ասելով, որ այստեղ չկայ մեր հասկացողութեամբ մտաւոր տարր, որ հետաքրքրուի Խորհրդային Հայաստանի կուլտուրայով: - Եւ ես համաձայնուեցի նրա հետ: Ու շուտով համոզուեցի, որ այստեղ ճիշդ որ չկայ բառացի ոչ մի հասարակական կեանք (խօսքս հայ գաղութի մասին է)»<sup>26</sup>: Նկատելի է Ե. Չարենցին պատած տրտմութեան ներքին շերտը, որը խնամքով փորձում է թաքցնել յիշեալ նամակում:

Յիրաւի, 20-ական թթ. կեսերից ստեղծագործական բուռն կեանքն այստեղ բացակայում էր, անունները քիչ էին: Կարող ուժերից յիշատակենք 20-50-ական թթ. առժամեայ գրական «ընդլայտակ» անցած Յակոբ Մնձուրուն, արձակագիր Բագարատ Թեւեանին, որը 20-ականների վերջերից մինչեւ 60-ականների ուղիղ կէտը ընդհատումներով լոյս էր ընծայում «Երջանիկ» տարեգիրքը (սկզբում, մի որոշ շրջան՝ որպէս «տարեցոյց»), Կոմիտասի կենսագիր, բանաստեղծ Թորոս Ազատեանին, որը 50-ականներին հրատարակում էր «Աստղաբերդ» հանդէսը, խմբագիրներից՝ Մանուկ Արսլանեանին («Ազդարար»), 1940-ին «Մարմարա»-ն հիմնած Սուրէն Շամլեանին, այն լրագոյնս շարունակած Պետրոս Չօպեանին: Ընդհանուր պոլսական բանաստեղծական մթնոլորտ ստեղծելու ջանքն առանձնացնում էր Համբարձում Չոհականին, Եղուարդ Սիմքէշեանին, Գուրգէն Թրենցին, Եղիշէ Այվազեանին, Սկրտիչ Հաճեանին, որը, ի դէպ, գրում էր նաեւ թատերգութիւններ, իսկ աւելի ուշ արտագաղթեց Մեքսիկա: Սակայն, նկատենք, որ փոփոխակի մակարդակներով, ազգայինը այլաբանական շերտերի տակ քօղարկումով, մտածողութեան «հինցած» պաշարով բովանդակային որակական յաջողութիւն ակնկալելը, ըստ էութեան, անտրամաբանական պահանջ էր, մանաւանդ եթէ նախապէս «ապահովաբար» գեղարուեստական տարրերից լուսանցք էր մղում ազգային ընկալումների առողջ հատիկը:

1957-ին կազմելով «Համայնապատկեր հանրապետական շրջանի իսթանպուլահայ գրականութեան» ժողովածուն՝ համայնքի ճանաչուած արձակագիր Վարդան Կոմիկեանը, առանց սուր կողմերը կոկելու, նկատում էր. «Մենք գմեզ կը գտնենք լլկիչ առանձնութեան մը մէջ», Ստամբուլն այլեւ «...ոչ եւս է իբրեւ հայ

25 Եղիշէ Չարենց, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 6, Եր., ԳԱԱ հրատ., 1967, էջ 413:  
 26 Նոյն տեղում:

մշակութային կեդրոն, այլ՝ խոպան մը, ուր տեղ տեղ կանանչություններ կ'ընձիւղին հին սերմերէ՝ վատոյժ եւ անգոյն»<sup>27</sup>:

Սակայն Պոլիսը փոխակերպումի, անակնկալ գրական վերելքի ուղին բռնեց՝ հզօր զարթօնք ապրելով ընդամէնը երկու-երեք տասնամեակ անց, արդէն նոյն՝ յիսունական թթ. կէսերից: Ի հարկէ, պատմական խորքի լոյսի տակ իսկապէս առեղծուած է թուում եղածը. ոչ մէկը չէր կարող կանխատեսել, թէ 40-ական թթ. երկրորդ կէսից պոլսահայութիւնը դուրս պիտի գար սոսկումի վիճակից, եւ այդ արթնութիւնը պիտի նշանաւորուէր գրական աննախադէպ վերելքով, որը յարատեւում է առ այսօր: Դարի երկրորդ կէսի գրողները (Զաւէն Պիպէռեան, Զահրատ, Զարեհ Խրախունի, Ռ-ոպէր Հատտէճեան, Սկրտիչ Մարկոսեան, Իգնա Սարքաւան, Վարդ Շիկահեր եւ ուրիշներ) խորքով իրացրին դարասկզբի արեւմտահայ գեղարուեստական մտածողութիւնը, դարձան արուեստագէտ սերնդի գրական երազանքը իրագործող գեղագէտներ:

Ընդհանուր գծերով ի՞նչն է բնորոշ ստամբուլահայ նորագոյն գրական շարժմանը. էպիքական գեղարուեստական մտածողութիւնը, առօրեական միապաղաղութեան մէջ գեղագիտութիւն վերածելու շնորհը, այլաբանական, բառային ենթախորքի բացայայտման բարձր ճիգը եւ գլխաւորը՝ ազգային մտածողութեան վերադարձը ստեղծագործական ընկալումների հուն: Մեր օրերում՝ նոր հազարամեակի արշալոյսին, արմատներին փարած ստամբուլահայ գրական ջոկատը Սփիւռքի մարտունակ եւ արդիւնաւոր ուժերից է, թէւ տեղում անմիջապէս եւ շեշտեմք, որ գրական զարգացման հեռանկարներ համայնքն այլեւս կարծես չունի. նորերը չեն գալիս, պարզապէս չկան: Բանաստեղծների եւ արձակագիրների հրաշալի ջոկատը ծերանում է գրական շարժման հետ միասին:

Այնուհանդերձ, Պոլսոյ առիթով ընդգծենք, որ երեւոյթը վկայում է արեւմտահայ գրական միասնական ընթացքի յաջորդականութեան մասին, ինչը սփիւռքահայ գրականութեան կարեւոր գծերից մէկն է:

#### **զ) Օրինաչափութիւններ Սփիւռքի գրական զարգացումներում**

Սփիւռքահայ «կղզեակային» գրականութեան քիչ թէ շատ բնականոն զարգացման համար տարրական նախադրեալներ են դառնում՝

1. տեղական գրականութիւնների մակընթացութիւնները եւ գրաճանաչողական ըմբռնումների համակարգն առհասարակ,

2. ազգային հաստատութիւնների (եկեղեցի, կուսակցութիւն, միութիւններ, թերթ, մշակոյթ) ներքին կազմակերպութիւնը,

3. գաղթօջախներում գրական ւսանողյոթների շարունակականութեան գիտակից փորձը, ինչի շնորհիւ հայերէն մամուլը, մշակութային հանդիսութիւնները, հրատարակութիւնները որոշ իմաստով խաղում են գրական կեանքի կազմակերպչի դեր,

4. լեզուի մակարդակների «դոնքիշոթեան» պաշտպանութիւնը, որը դիմակայութեան թոյլ կամ ուժեղ փորձերով գրեթէ զանգուածաբար նահանջ է ապրում, եւ եթէ կայ մի գրչօջախ, ուր հաճելի բացառութեամբ 21-րդ դարասկզբին պահպանում է յարաբերական ներուժ եւ ստեղծագործական տարերքի բնականոն ենթահող, Ստամբուլն է, հին Պոլիսը, ինչպէս եւ ճակատագրի խաղով է՛ր 20-րդ դարասկզբին:

Աւետիս Աւարոնեանը առանձնակի յոյսեր չէր տածում, իր խօսքով՝

<sup>27</sup> «Յամայնապատկեր հանրապետական շրջանի իսթանպուլահայ գրականութեան», հրատ. Արամեան Սանուց Միութեան, Իսթանպուլ, 1957, էջ 3:



գաղութային գրական շարժման ապագայի հանդեպ՝ անպտուղ համարելով ջանքերը այդ նոր գրականության անարմատ շնչառության համար, գտնելով, որ միայն մայր հողից է աճում ազգային մշակոյթը: Նրա կարծիքով, գեղարուեստական լիարին գարգացումը հնարաւոր է ազգային մայր միջավայրում՝ երկրում, ուր կան հայեցի գարգացման, բարոյաբանական նկարագրի պաշտպանության նախահիմքեր, ուր ժողովուրդը մտածում է արտայայտում է իբրև լեզուահոգեբանական միասնություն:

Նա կտրուկ յայտարարում էր . «Գաղութային մշակոյթը ջրի քամք է: Ով որ գիղղացի է ինձ պէս, նա լաւ գիտէ, թէ ինչ է քամքը: Գիղղացին իր արտը ջրելուց յետոյ կտրում է ջուրը, որպէսզի ուրիշի արտն էլ ջրովի: Չէ՞ որ կարգով է: Կտրուած ջուրը, սակայն, դեռ հոսում է դէպի արտը, եւ տեսնողը կարող է կարծել, թէ ջուրը կտրուած չի: Բայց իրականի մէջ մնացորդ ջուրն է այդ, քամքը, որ ոյժ չունի, հոսանք չունի իր ետերը:

Եւ այդպէս է մշակոյթը հայկական գաղութների համար: Նա քամք է: Մշակոյթը հողից է ծնում, հողն է կերպարանք, բնութիւն եւ դրոշմ տալիս նրան: Մշակոյթը ժողովրդին տալիս է լեզու, գեղեցկութիւն, ճշմարտութիւն»<sup>28</sup>:

Ա. Ահարոնեանի համոզմամբ՝ այդպիսին է պոլսահայ գրականութիւնը՝ մշակոյթի ազգային հաստատուած գծերով: Սփիւռքահայ գրականութեան վաղուայ օրուայ մասին, ի հարկէ, յռեւտես է արձակագրի մօտեցումը, երբ հնչում է նրա արշալոյսին: Տեղում եւ մխիթարութեամբ նշենք, որ Ա. Ահարոնեանն այնքան էլ ճիշտ չեղաւ իր կանխատեսումներում. այդ «քամքը» գրեթէ ինը տասնամեակ է՝ դեռ մղում է մեր գրական ածուները:

Սակայն տեսակէտն ինքնին այնքան էլ սխալ չի թոււմ մայր հողից բարձրացող մշակոյթի մասին, երբ ընդունում ենք, որ արձանագրելու ենք արեւմտահայ նորագոյն սերնդի, այսպէս կոչուած՝ երրորդ կամ չորրորդ ալիքների ենթագիտակցական հեռացումը մայրենիի աւագանից: Մի փոքրիկ սրբագրում «քամքի» այս յարատեւութեան առումով. սփիւռքահայ գրականութիւնը տոկուն էր տասնամեակների մէջ նաեւ այն պատճառով, որ հեռաւոր թէ մօտաւոր Հայաստանում՝ մայր երկրում, հողից ծնունդ առնող մշակոյթ կար, ինչին խանդաղատանքով հետեւում էր, յաճախ մարտահրաւէր նետում, երբեմն էլ սուր ձեւերով քննադատում:

Ուրիշ է սփիւռքահայի ներհակ հոգեբանութիւնը: Նրա մէջ ծաւալուած են բազում կնճռոտ հարցականներ: Նախ, օտար երկնքի տակ նրան դժուարութեամբ է լքում երէկուայ գաղթականը, որի հետ անորոշութեան կռիւը, ի վերջոյ, լուծում է յօգուտ կայուն կեցութիւն գտած սփիւռքահայի: Նա ուժ է գտնում վանելու իր մէջ դեռ նստած, յարատեւող գաղթականին: Դա երկար ու յամառ ճանապարհ է՝ գաղթականի բարդոյթից դէպի ինքնութիւն հաստատող սփիւռքահայ: Կարօտը երբեմն «դաշնակցում է» գաղթականին, իսկ նիւթական յարաճուն ձեռքբերումները, ընդհակառակը, նպաստում են սփիւռքահայ ճանաչողութեան, իրական նոր ընկալումների: Նրա հայաշունչ մտորումներում ենթագիտակցական բեւեռներ են դարձել հայրենիքի եւ Հայաստանի տեսականները, ուր ձգողութիւնը ոգու տարածքն է, ասել է թէ՛ ծննդավայրի կամ հոգու հայրենիքի տիրապետութիւնը: Խորհրդային Հայաստանը, ի հարկէ, ոգի չէ, այլ կարծես հեռուն մնացած, հիւրը պահպանած հաւատարիմ ազգական, որ փարոս ունի ձեռքին, որի գոյութիւնը ինքնավստահութիւն է ներշնչում, վերջին հանգրուան է՝ հակառակ ունեցած խոր,

28 Աւետիս Ահարոնեան, Ժողովածու երկերի 10 հատորով, հ. 1, Պոսթըն, 1947, էջ 67:

յաճախ անլուծելի տարածայնությունների, գաղափարական, լեզուական, մշակութային, ներանձնական պատնեշների:

Այդ առթիւ ուշագրաւ է Շահան Շահնուրի սեւեռուն եւ ինքնատիպ դատողութիւնը, որն անակնկալ յորդաց կեանքի վերջում «Արեւմտահայ գրողների նամականի» երեւանեան ստուար հատորի գնահատութեան առթիւ: Նա գաղթականութիւնը դիտում է իբրեւ մի հաւաքականութիւն, որի ներսում կամ հայեացքներում միայն եղբայրակցութիւն պէտք չէ փնտռել, այլ նաեւ մեղալի միւս կողմը, որը ինքը որակում է «թոյն»: «Վերադառնալով մեզի, մեր ազգային թոյնին, - գրում է նա, - պէտք է գիտնալ, որ ոչ մէկ գաղթականական զանգուած կրնայ ապրիլ երկար ժամանակ զայրագնաց վիճակի մէջ: Կամ այն է, որ կը կորսուի թունալից, եւ կ'ան կը ներծծէ թոյնը (իմա՝ վերապրելու յատկանիշը-Ս.Գ.), երբ տուն-տեղ կ'ըլլայ եւ արմատ կը նետէ: Այս պարագան այնքան ճիշդ է, որ կագ ու կռիւ կար մեր գաղութներուն մէջ երեսունական թուականներուն: Այլեւս չկայ այդ տեսակ բան: Մենք գաղթական ենք՝ գաղթական չըլլալով հանդերձ: Մենք Սփիւռք ենք»<sup>29</sup>:

Ըստ Շ. Շահնուրի դիպուկ դիտարկումի՝ գաղթականը սփիւռքահայից տարբերում է «աքտրականի» տրամաբանութեամբ, այսինքն՝ «կը ներգաղթէ», չունի հաստատուն կայք, մինչդեռ սփիւռքահայը «կը մնայ հոն՝ ուր որ էր, այն պարագային, երբ չի չուեր դէպի արեւմուտք, միշտ աւելի հեռուն, միշտ աւելի ցրիւ, ճամբուն ընթացքին աստիճանաբար նօսրանալով եւ հալելով»<sup>30</sup>:

Սփիւռքահայ եւ առ հասարակ արեւմտահայ գրականութեան իւրայատկութիւնների մէջ նկատի պէտք է ունենալ նաեւ այն երկփեղկ վիճակները, որ ստեղծուել են լեզուի ընկալման, ճանաչողութեան առումներով:

Չի կարելի անտեսել ակնառու իրողութիւնը. իւրաքանչիւր գաղթօջախում նկատելի է արեւմտահայերէնի ճգնաժամը՝ ժամանակի յարաճուն ընթացքի մէջ կորցնելով ծննդավայրի ենթահողը, որոշ դէպքերում դառնալով ջերմոցային:

Մեր աչքի առջեւ, ըստ էութեան, սփիւռքահայ գրականութեան եւ նրա կենսադրիւր արեւմտահայերէնի մայրամուտն է: Տեսնելով երեւոյթի ահագնացող ծաւալները՝ ստամբուլահայ գոյապաշտ արձակագիր, «Մարմարա»ի երկարամեայ խմբագիր Ռոպէր Հատտեճեանը մեզ ուղղած նամակում վերստին օրակարգ է բերում Ա. Ահարոնեանի տագնապը՝ նոր ձեակերպում տալով համահունչ մտքին. «Մեր ողբերգութիւնն է այս. արմատէն կտրուած ծառը տեսնենք թէ տակաւին որքա՞ն ատեն պիտի կարենայ պահել իր տերեւներն ու ճիւղերը»<sup>31</sup>:

Այս վերջին մտքի առումով մենք կարող ենք վերբերել Ֆ. Գոստոնսկու խոր գիտակ Մարկ Սլոնիմի մտքի համանման ասոյթը՝ ընդգծելու համար, սակայն, ռուսական ու հայկական գրական սփյուռքների ճանաչողական տարբերութիւնը: «Բայց, բարեբախտաբար, (ռուս – Ս.Գ.) վտարանդի գրականութիւնը միայն մէկ ճիւղ է ընդհանուր ծառաբնին: Այն կենսունակ է, քանի որ կենսունակ է ծառաբունը, այն սնուցում է նրա՝ կենսահիթով. ծաղկում է, եթէ այդ նիւթափոխանակութիւնը կենսայորդ է, եւ այն չորանում է, եթէ դադարում է»<sup>32</sup>: Երեւոյթի տրամաբանութիւնը հայ եւ ռուս գրագէտների մօտ, կարելի է ասել, նոյնն է, միայն տարբեր են ելակէտերը. ռուսական միջավայրում Սփիւռքի գրականութեան ընկալումը խիստ աճանցեալ է՝ մայր գետի գերակայութեամբ, եւ վտանգները, ընդջրեայ խութերը

29 Շահան Շահնուր, Երկեր երկու գրքով, գիրք Երկրորդ, Եր., «Ս.Գ.», 1985, էջ 223-224:

30 Նոյն տեղում, էջ 224:

31 Տես Սուրեն Գանիէլեանի անձնական արխիւ, Ռոպէր Հատտեճեանի ֆոնդ:

32 Марк Слоним, Живая литература и мертвые критики / Литература русского зарубежья, т. I, кн. 2, М., 1990, стр. 385.

տրում են գուտ քաղաքական նախահիմքերով: Մինչդեռ մեզանում գրականութեան «արեւմտահայ ծառարմի» մասին է խօսքը, որի գրամշակութային հզորութիւնը եւ ինքնութիւնը մարումի միտումներով է յատկանշում Ռ. Հատտէճեանը:

**Է) Հայաստանակենտրոն քե՞ հայակենտրոն գրականութիւն**

Քաղաքական եւ ընկերային յարաբերութիւններում Սփիւռքը միշտ բախում է Հայաստանի խնդրին: Ծանաչողութիւնն անընդմէջ է, ընկալման ակունքները տարբեր ժամանակներում՝ տարբեր: Միասնութեան ըմբռնումը յաճախ բացում է ենթագիտակցական շերտերում: «Սէկ ժողովուրդ, մէկ մշակոյթ» կարգախօսը շատ անգամ չի գործում, թէւ եղբայրութեան եւ համախմբուածութեան գործօնը իբրեւ գաղափար գերիշխում է ընդհանուր գնահատութիւններում:

Առաջին հայեացքից բախումն աւելի քան տրամաբանական է, առարկայական, ուրեմն եւ՝ անխուսափելի: **Նախ**, ընդունենք, անժամանցելի արժէքները. Հայաստանը նիւթականն է, յաւերժը, Սփիւռքը՝ յարաբերականը: **Երկրորդ**, Սփիւռքը միազանգուած չէ, տարբեր քաղաքական հոսանքներ տարուբերում են նրա նաւը կեանքի ալիքների վրայ: Թուրքիայում ապրող հայութիւնը ազգային զգացումներ բարձրաձայնել երկար տասնամեակներ պարզապէս չէր կարողանում եւ գրականութեան մէջ յաճախ դիմում էր եզոպոսեան լեզուի՝ առարկաների խորհրդանիշների պայմանական խաղի: Նման պարագային վարժարաններում հայրենիքի պատմութեան անցքերը ակամայ «վստահում են» գրականութիւն առարկային:

Հայաստան երկրի նման «նիւթականացումը»՝ պետականութեան յայտնի շնորհի տակ, այսինքն՝ կայսրութեան մաս կազմելու պատմական դերաբաշխումը, նախ, բերում էր խուլ դժգոհութեան՝ Մշակութային Հայրենիքի, Երազի մեծութեան խորհրդին վարժուած հայութեան զանգուածներին, քանի որ դա, մեղմ ասած, նրանց երազած Հայաստանը չէր, օտար գաղափարների, օտար տիրակալների էր տրուած: Դա գիտակցում էին դեռ հին ժամանակներից խորհրդայնամէտ գրողներից շատերը: Անցեալ դարի 90-ական թթ. դա խոստովանեցին նաեւ Խորհրդային Հայաստանի կուսակցական առաջնորդները, որոնցից գրականութեան պատմաբան Կառլէն Դալլաքեանը ուղղակի ենթատեքստով շեշտում էր . «Միւս կողմից, քսանական թուականների սկիզբը թէ՛ Արեւելեան Հայաստանում, թէ՛ Սփիւռքի տարածքով մէկ առարկայօրէն նշանաւորում էր հայոց նոր կացութիւնը, որը իր հերթին արտապատկերում էր գաղթաշխարհի հանրային մտքի մէջ գրեթէ անմիջորդաւորուած դրսեւորումներով: Խորհրդային կարգերի հաստատումը Արեւելեան Հայաստանում... հակազգային, շինծու միջազգայնականութեան, պոռոտախօսութեան ու քարոզչութեան ձգած բացասական դաջուածքով հանդերձ, որոշակի հող էր ստեղծում գաղթահայութեան այլազան խաւերի թէ՛ հոգեբանական եւ թէ՛ գիտակցական-բանական համապատասխան հակադարձութեան համար»<sup>33</sup>:

Անցեալ դարի 30-ական թթ., երբ Վահան Թէքէեանը դեռ փափագում էր Հայաստան գաղթել, երբ վրայ չէր հասել 37-ի ուրուականը, նա գրում էր «ներկայ» Հայաստանին. «Ներէ՛ որ քէն ըրի քեզի/- Մինչեւ երէկ - ու դեռ տաք չեմ բոլորովին», կամ՝ «Տարբեր ես դուն մեր երազէն.- աւելի՛ լաւ... /աւելի լա՛ւ կ'ըսեմ, այո՛, անզիղջ, անգութ, /Զի դատակնիքն է «չեղածին» փաստն «ըլլալուդ»...»<sup>34</sup>: Ի հա՛րկէ, բանաստեղծը տեսնում էր խորհրդային կարգերի բազմաթիւ վրէպները, տարբերութիւնը ցանկալիից, սակայն նրա գոյութեան առթիւ իր հանդուրժողութիւն-  
33 Կառլէն Դալլաքեան, Ակնարկներ սփիւռքահայ հասարակական մտքի պատմութեան, Եր., ԳԳ ՊԱԱ «Գիտութիւն» հրատ., 1994, էջ 346:

34 Վահան Թէքէեան, Գաղտնի պարտեզ, Պէյրութ-Երեւան, 2003, էջ 184:

Քիվ 3(28) հոկտեմբեր-դեկտեմբեր 2009

ՎԵՄ համահայկական համերկ

նը ելնում էր քաղաքական փաստի բացարձակացումից՝ հինաուրց հայ հողի վրայ համախումբ ապրում է ազգային ստուար հասարականութիւն:

Խորհրդային Հայաստանի նկատմամբ ազգայինի դիրքերից աչքի ընկած գրողները քաղաքական սուր ընդդիմադիր կեցուածք որդեգրեցին համայնավար գաղափարախօսութեան դիմաց: Այդ պայքարում խորհրդահայ ընթերցողն «իր հերթին» գրկուեց անցեալի եւ ժամանակակից գրական այն ճանաչողութիւնից, որ բերում էր արեւմտահայ գրականութեան դասական եւ սփիւռքահայ շրջանի կենսավորոճը:

Դասական շրջանի հսկաներից՝ Սիամանթօն, Դ. Վարուժանը եւ ուրիշներ 10-20-ական թթ. պարբերաբար ենթարկուեցին Վ. Տէրեանի, Ե. Չարենցի, հայրենի գրական քննադատների հարուածային ջոկատի եւ խորհրդահայ պաշտօնական մտքի հետեւողական գրոհներին<sup>35</sup>: Ծրագրուած եւ կամայական մօտեցումների հետեւանքով ժամանակին իրենց հայաստանեան ընթերցողներին չգտան Սփիւռքի լաւագոյն հեղինակները՝ Ա. Ահարոնեանը, Յ. Օշականը, Համաստեղը, Վ. Շուշանեանը, Ա. Հայկազը, Մ. Իշխանը եւ շատ շատերը, նկատելի յապաղումով ու խեղափութում՝ 60-ականներին Երեսան «հասաւ» Շ. Շահնուրը: Ի դէպ, վերջինս անցեալ դարի 70-ական թթ. սկզբին մերժում էր հայաստանակենտրոն կարգախօսը՝ վերբերելով հայութեան ու «ոգեկան» հայրենիքի գոյգ գերակայութիւնները. «Սփիւռքի գրագէտին գոյութիւնը կ'արդարանայ այն չափով, ինչ չափով որ ան կը յաջողի շտարբերիլ ոգեկան հայրենիքէն, այսինքն՝ ինքնիրմէն, - գրում է նա՝ մերժելով Կարօտի, յուշի, անցեալի կոչակների նպատակադրումները: - Ամէն ինչ ներկայ է, այսօր է, եւ հոս է: Կարելի չէ վերապրեցնել անցեալը...: Երբ Համաստեղ կը պատմէ իր գիւղը, իր այսօրուան ապրումներն են, որ կը հաղորդէ մեզի...: Հայրենի հողը մեծ բան է: - Եւ նոյն պահին՝ - Ամէն բան չէ: Երեք սերունդ թրքահայ գրագէտ ճանչցանք, որ ապրեցան, որ երգեցին եւ զացին մեռան, իրենք իրենց մէջ կրելով հայութեան խոր գգայնութիւն, այլ խօսքով՝ ոգեկան հայրենիքը: Կեցցէ՛ Հայաստան»<sup>36</sup>:

Ոգեղէն հայրենիքը մարտնչող Հայաստանն է՝ օտար գաղափարների Հայաստանի դէմ, ինքնին գաղափարի, ազգային գաղափարի մարմաւորումը:

Խօսքը նաեւ գրականութեան ազգային եւ գաղափարական ընկալումների մէջ ամէնից չարչրկուած խնդրի՝ Հայրենիք-Սփիւռք կապերի երկու տարրնթաց, երբեմն հակադիր ուղղութիւնների միասնական հունի ճանաչման մասին է: Կարելի է ասել, որ գործ ունենք թերեւս ամէնից դիմորոշ, քաղաքական լիցքերով յագեցած գերխնդրի հետ՝ հետաքրքրութիւններ, հայեացքների, սկզբունքների բախում, օտարում անգամ թշնամութեան յատկանիշներով (յիշենք յայտնի ցեխարձակումները Յա-

35 Երանց քննադատական մոլուցքը «ազգայնականութեան» թիրախն էր, որը Ե. Չարենցը, օրինակ, չէր էլ թաքցնում: «Սերի դաշնագրից մինչեւ հայ կանանց պեծուփ մագերեւ եւ հեթանոս մարմինը կան ընդհակառակը» երգիծական յախումն յօդուածում բանաստեղծն իր խօսքն ուղղում էր Աւետիս Ահարոնեանին ու անցնում «հեթանոսական» գրական շարժման դատափետմանը. «Ռուսահայ այս վարժապետ ինտելիգենտի (Աւետիս Ահարոնեանի - Ա.Դ.) արնակից եղբայրը (Դ. Վարուժանը - Ա. Դ.) Պոլսում այն ժամանակ իրատարակում էր «Նաւասարդը», որի ղեկավարները, նայիրեան վարժապետազգեստ քուրմեր ու ասպետներ, գրչի մի մոգական շարժումով վերադարձնել էին ձգտում «հեթանոսական ժամանակները», այսինքն՝ ճորտատիրական կարգերուն փթթած ցոփութիւնը, շուայտութիւնը եւ այլասերուած հաճոյքը... Եւ կարծում էին, թէ նախակարապետներն են հայկական նոր Ոսկեդարի, նորագոյն Ռենեսանսի» (Եղիշէ Չարենց, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 6, էջ156): Մի փոքր անց գաղափարական մոլորութեան դիրքերից խորհրդահայ բանաստեղծը Դ. Վարուժանի եւ շարժման մասին տալիս էր սխալ ու խորքի մէջ անընդունելի բանաձեւ. «Իրօք որ «հեթանոսական» վակխանալիա էր, որ ապրում էր հայ ազգայնական մտաւորականութիւնն այդ օրերին: Այդ մտաւորականութեան քաղաքական կազմակերպութիւնը «Հայ մարտական կուսակցութիւնը», ճիշտ որ «հեթանոսական» անփութեամբ ասպետական ֆրագի հրթիռներ էր վառում... պայթուցիկ միւթերի շուրջը», **Նոյն տեղում**, էջ 157:

36 **Շահան Շահնուր**, Երկեր երկու գրքով, գիրք Երկրորդ, էջ 224-225 (ընդգծումը Շ. Շահնուրին է - Ա. Դ.):

կոր Օշականի, Համաստեղի, Արամ Հայկազի, Շաւարշ Նարդունու, Մուշեղ Իշխանի, մի նկատելի չափով՝ Կոստան Չարեանի, Վազգէն Շուշանեանի եւ շատ ուրիշների դէմ):

Նիւթական, «կենդանի» (Յովհ. Թումանեան), «ներկայ» (Վ. Թէքէեան) Հայաստանը որպէս իրականութիւն հաստատուն հասկացութիւն է, սակայն սփիւռքահայ գրականութեան մէջ համարժէք տարածութիւն, լինելութեան որակական վստահագիր մինչեւ այժմ չի նուաճել: Հայակենտրոն ճանաչողութեան մէջ կենսական է ո՛չ այսօրուայ Հայաստանը, այլ՝ պատմութիւնը, անցեալը, սփիւռքահայի բնութագրի անվերջ որոնումը, ուժացումը: Ուշագրաւ է այս առումով քսանամեայ Վ. Շուշանեանի վերաբերմունքի նոր սահմանը, որը կենտրոնական հանգուցային դերում տեսնում է գրականութեան նշանակութիւնը. «Գաղութները եւ մայր երկրի ժողովուրդը իրար միացնող ամենագորատր կապը անտարակոյս որ գրականութիւնն է»:

Հայաստանակենտրոն գեղարուեստական հայեացքը ամանցեալ է, թոյլ բացայայտուած, շատ դէպքերում՝ քաղաքական տեսակէտից՝ շահարկուած: Այն եղել է, ի հա՛րկէ, գաղափարական առողջ հանգրուան, յուսալի յենարան ամենակոյ աշխարհում, բայց արեւմտահայ արուեստագէտի համար նպատակի առումով որպէս վախճանակէտ չի ծառայել: Այստեղ գործել է «եստիրման» օրինաչափութիւնը՝ Հայաստանն ինքն էր «ազատուել» ուզում «արեւմտահայ գումակից», բեռից:

Իր հերթին արեւմտահայը գիտակցել է . հայրենիքը վերագտնելով՝ կորցնելու է լեզուն, մշակոյթի ասանդոյթի յատկանիշերը, տեսակի՝ ինքնութիւնը: Թերեւս այս ամէնն իր մէջ աճել է անորոշ տագնապի՝ ենթագիտակցութեան յախտուն ընթացքներով: Սփիւռքահայ գրականութեան հերոսն ու հեղինակը յաճախ ի վիճակի չեն լինում մէկընդմիջտ տրուած միջավայրից, փակուղուց դուրս գալ. հայակենտրոնը դեռ ելք չէ, քանի որ յուշում է անցեալը, բայց խեղդում հայօրէն ապրելու հեռանկարը: Ամերիկահայը ամերիկանալու ճանապարհին է: Նոյնը՝ ֆրանսահայը, արգենտինահայը, եւ այսպէս շարունակ:

Հայաստանակենտրոն հայեացքը նոյնպէս հիասթափեցնում է: Խորհրդային տարիների մուժը, անկախացումից յետոյ զանգուածային չափերի հասած արտագաղթը, ժողովրդավարական, սահմանադրական հաստատագրումների աններելի յապաղումը Հայաստանի վարկանիշը զցել են նաեւ սփիւռքահայերի աչքում: Ինքնիշխան Հայաստանը, որն ապրեցնող ուժ էր սերունդների համար, այժմ, պարզում է, այնքան գրաւիչ չէ. երազից դէպի իրականութիւն «ճամբուն վրայ» մենք կորցրինք երազը, փոխարէնը գտանք դաժան ու անհրապոյր իրականութիւն: Հայաստանը ձգում է արեւմտահային գիտակցութեամբ, բայց նա հասկանում է, որ զգայութիւնների, հոգեբանութեան, ինքնութեան զոհաբերութիւնները այստեղ աւելի շատ են, մենութեան ու խորթութեան տառապանքը՝ տիրական:

Մենք ցանկանում ենք դրանցից գատել հայրենիքի ճանաչողութեան խորհուրդը, որի արծարծումը այնքան էլ պարզ կամ անամպ չէ, ինչպէս կարող է թուալ առաջին հայեացքից:

Ի դէպ, հայաստանակենտրոնութեան հարցը Սփիւռքի եւ հայրենի հայ գրականութեան մէջ քանիցս շօշափուել է, բայց մեկնութիւնների առումով, կարծես, ոչ ամբողջապէս: Այն երկար ժամանակ եւ երկու միջավայրերում (իսկ սա երկրորդական պարագայ չէ) մի տեսակ խնամքով շրջանցուել է՝ գուցէ սուր անկիւնների ընկալման եւ բացատրութիւնների քաղաքական անյաղթահարելիութեան պատճառով:

Մինչդեռ խորքային բացայայտման ճիգը յետպատերազմեան առաջին տարիներին վերաբերում է յատկապէս լիբանանահայ գրական երկու հարուածային ուժերին՝ Անդրանիկ Ծառուկեանին եւ Մուշեղ Իշխանին, որոնք Երկրորդ Աշխարհամար-

թիվ 3(28) հոկտեմբեր-դեկտեմբեր 2009

ՎԷՄ համահայկական հանդես

տի աւարտին Խորհրդային կայսրութեան մաս կազմած Հայաստանի հանդէպ որդեգրեցին ճանաչողական նախապայմանի գրական քաղաքականութիւն՝ զատելով նրանից պատերազմի յաղթական ազդեցութեան լուսապակը եւ դրա հետ կապուած՝ հայրենիքի զգայական ընկալման պարտադիր դարձած կցորդը, որը խանգարիչ գործօն էր դեռ 20-40-ական թթ. ի վեր:

Բանաստեղծ եւ արձակագիր Անդրանիկ Ծառուկեանը «Թուրք առ Երեւան» պօեմը գրեց Երկրորդ Աշխարհամարտի աւարտին՝ ի պատասխան խորհրդահայ ոչ անյայտ երգիչ Գեորգ Արովի «Մենք չենք մոռացել» տխրահռչակ բանաստեղծութեան<sup>37</sup>: Ա. Ծառուկեանը պաշտպանում էր հայ Սփիւռքի ապրելու իրաւունքը<sup>38</sup> եւ յորդորում ժողովրդի համախմբուածութեան նոր քաղաքականութեան որդեգրում պաշտօնական Երեւանի կողմից<sup>39</sup>: Անսացի՞ն այս յորդորը հայրենիքում. այո՛, բայց «համախմբուածութեան» դասընթացները ներգաղթողների համար որոշեցին անցկացնել խորհրդային երկրի «սառոյցներում»: Ներգաղթը դարձաւ պատուհաս, խոր հիասթափութիւն: Այն աւելի խորացրեց վիճիկ հայութեան երկու հատուածների միջեւ: Միութեան գաղափարի ժամանակը դեռ չէր հասունացել: Ա. Ծառուկեանի հիասթափութիւնը խորն էր:

Նման ուտոպիական բաղձանքներից, սակայն, զերծ մնաց ռոմանտիկ բանաստեղծ Մուշեղ Իշխանը, որը, ճիշտ է, ոգեկոչել է Հայաստանը, բայց իբրեւ մշակութային ասանդոթի շարունակութիւն. «Բոլո՛ր, բոլո՛ր կարօտներու իրայրքով, /Իբրեւ երկինք, իբրեւ լոյսի անհուն ծով, /Մայրական գիրկ, սպիտակ հարս դիւթական, /Իբրեւ ժպիտ, լուսի՛ւն, /Եւ ծաղկաւետ երանութեան իբրեւ տուն, /Իմ հեռաւո՛ր Հայաստան»<sup>40</sup>: Դռնեւ անցեալ դարասկզբից ձեւաւորուել է, այսպէս կոչուած, Մշակութային Հայաստանի կերպարը (Ա. Բահակեան, Վ. Թէքեան, Վ. Տէրեւան, Վ. Շուշանեան եւ ուրիշներ):

Նորոգ Հայաստանը Ա. Ծառուկեանի պէս նոյն Պէյրութում ապրող Մ. Իշխանի համար բաղձալի էր, սակայն չէր դառնում կանչ, այլ միայն սպասում: Յետագայում մշակութային կամ «անմիւթ Հայաստանը» հակադրուեց նիւթական, այսինքն՝ իրական Հայաստանին, որը տարածքի բերումով հայրենիք էր, բայց ոգու թելադրանք չէր 20-ական թթ. ի վեր<sup>41</sup>:

37 Կատաղի համայնավար, «Երեքի դեկլարացիայի» գործուն անդամներից Գ. Աբովը շատ աւելի ուշ, 1944-ին, անհանդուրժող ոճով պարտադրում էր խորհրդային գաղափարախօսութեան «յաղթանակը» յատկապէս դաշնակցական մտքի դէմ մղուած անդուլ ճակատում ու սպառնում, թէ չի մոռացուած, «...որ պիտի ջնջենք /Երկրից առհաւետ /Սեւ ֆաշիզմի հետ /Լաւեւ հետքն իսկ ձեր...» Տե՛ս Անդրանիկ Ծառուկեան, Թուրք առ Երեւան, Եր., ԳԳՄ հրատ., 2001, էջ 4:

38 Պատասխանն աւելի քան որոշակի է՝ «Ջնջել հե՛տքն իսկ մեր /Բայց ի՞նչ է արդէն կեանքը մեզ համար, - /Չարչարանքի բեռ, /Ու ճակատագրի քառուղիներում /Կեանքը մեզ համար /Անարիւն կռիւ ու լռին մաշում ... /Խփել է արդէն մեր կարկան ուսին /Բռունցքը բախտի. /Ու նորի՞ց բռունցք, ու նորի՞ց արիւն, /Եւ այն էլ, այն էլ երկրի՞ց հայրենի... »: (Նոյն տեղում, էջ 30):

39 «Եկել եմ ահա-պօետ մի չնչին, /Եւ կարօտահար իմ եղբայրների /Տաք սիրտն են բերել իմ հայրենիքին, /Որպէսզի սրտից հայրենի երկրի /Բորբ մեր սրտի դէմ սառոյցը ճաքի, /Ու սառոյցի տակ, ինչպէս ձնծաղիկ /Բացուած արեւին, /Եւ ինչպէս քնքուշ ու կարօտած մայր /Իր սիրտը բացի /Բոլորի՛ հանդէպ, բոլորի՛ համար...»: Նոյն տեղում, էջ 34: Բացուե՛ց, անշուշտ, ո՛չ:

40 Մուշեղ Իշխան, Գայաստան, Թեհրան, «Ալիք» տպ., 1961, էջ 6:  
41 Մ. Իշխանը նոյն «Գայաստան» պօեմում բանաստեղծական «ես» դարձած քնարական հերոսին իրաւունք է տալիս ազնիւ կասկածանքով դիմելու երկրի խորհրդին՝

<b>Ի՞նչ ես իրօք, ո՛ւր ես դուն, Շրջուն ոգի՞ թէ խորարմատ գոյութիւն, Երգի կտո՞ր, հին հեքեա՞թ, Իմ աչքերուս դէմ ծփացող վառ տեսի՞լք, Տճօղյն պատկեր կամ խնկաբոյր մագաղա՞թ,</b>	<b>Դանդերծեալի՞ թէ այս կեանքի Գայրենիք, Նահատակաց փառքի պաս՞կ լուսաշող, Գաղափարի կարմիր դրօշ փողփողուն, Ոսկի երագ թէ գորշ հող, Ի՞նչ ես իրօք, ո՛ւր ես դուն</b>
---	---

Պատասխանը հարցերի մէջ է: Երգիչը համաձայն է փարոսել «ոսկի երագին», աչքերի առջեւ «ծփացող վառ տեսիլքին», ասել է թէ՛ մշակութային, տրեւանական հնչողութեամբ՝ «հոգեւոր» Գայաստանին, քան «գաղափարի կարմիր դրօշ փողփողոջ» յաղթանակած իրական երկրին:

Միացող ցաւ կայ լիբանանահայ երգչի գեղարուեստական, բայց եւ պատմական արձանագրման խորքում. Հայաստանի ընկալման մէջ նոր տեղաշարժեր չկան, պատմական երկրին դեռեւս իրական շունչ ունեցող «ա՛յս կեանքի հայրենիքը» չի յաջորդել: Նոր չէ այն:

Վաթսուն եւ ատի տարիներ են անցել: Մինչդեռ մեր օրերում պատկերը կարծես նոյն հարցադրումների ոլորտում է, եւ պատասխանները մնում են կցկտուր, թէեւ Հայաստանն այժմ ինքնիշխան, միջազգայնօրէն ճանաչուած անկախ պետութիւն է: Չմոռանանք, անկախութիւնը սփիւռքահայերի հին, «ընտանի» երազն էր: Սակայն հարցականները կախուած են մնում մտաւորականութեան գլխին: Դեռեւս միասնական հունում չեն արեւմտահայութեան եւ անկախ Հայաստանի գրամշակութային հետաքրքրութիւնները:

Նկատենք, որ հայակենտրոն եւ հայաստանակենտրոն բեւեռային մօտեցումները տարիների մէջ իսկապէս տարբեր ուղղութիւն եւ գնահատումների համակարգեր էին մշակում ազգային երկու գրական հատուածներում՝ նրանց ատի ու ատի հեռացնելով ատանդական փոխթափանցումների փորձից, խորացնելով արեւելահայ ու արեւմտահայ փոխադարձ ընկալչութեան վիհերը, երբեմն նաեւ հաղորդելով անհանդուրժող գրական մեկնակէտեր: Այս առթիւ գրականութեան խորհրդային եւ ետխորհրդային պատմաբան Կառլէն Դալլաքեանը իր մէկ գուսպ քննութեան մէջ, այնուհանդերձ, փորձում է նման ծաւալումներին տալ հոգեբանական ուշագրաւ բացատրութիւն. «Արեւելահայ թէ արեւմտահայ գրական երեւոյթները տարբեր կերպ էին ընկալում: Արեւմտահայութեան համար, քան արեւելահայութեան, համեմատաբար դժուար էր արեւելահայի զգացական թէ իմացական արդիւնքի հոգեբանական ընկալումը եւ հակառակը: Յամենայն դէպս հաւասարագօր չէր, աղեկվատութիւն չկար: Այդ տարանջատածութիւնը ատի եւս շօշափելի եղաւ Սփիւռքի գոյատուրմանը զուգահեռ: Ասես մի աներեւոյթ հոգեբանական պատմէշ գոյացաւ այդ երկու ընկալումների միջեւ, որը անգէն աչքով դժուար տեսանելի էր»<sup>42</sup>:

Նկատառումը գուցէ շատ դիպուկ է, բայց արդեօ՞ք դժուար նկատելի, ինչպէս ընդգծում է գիտնականը. ընդհակառակը: Հոգեբանական մորթը, կաղապարները, բուն ստեղծագործական հարցադրումները բացելը, խորքային ելեւէջով ճանաչելը եղան փորձաքար, եւ, ընդունենք՝ առաջին հերթին արեւելահայութեան համար, որը արեւմտահայ գրական զարգացումները ճգնում էր ներկայացնել միայն ածանցեալ, երկրորդական՝ Հայաստանից բացուող գեղարուեստական ու գաղափարական միտումների ենթաշերտերում: Սա ակամայ «աւազ եղբօր» վարքագիծ էր, որը մերժելի էր բոլոր կողմերից, նաեւ՝ հոգեբանական, ինչը հիմնական իր դրսեւորումներով մերժուեց Սփիւռքում:

Հաստատագրենք մի դառը ճշմարտութիւն. սփիւռքահայ մտաւորականութեան ճնշող մասի աչքում կորսուած է ռոմանտիկական, որը սերունդ է պահել: Նրան փոխարինել է իրատեսութիւնը: **Մայր երկիրը ջանք չի թափում «դուրսեցի» ժողովրդին ետ պահելու գահավէժ ուժացումի ճանապարհից: Իսկ տունդարձի, համախմբման ուղին ոչ միայն արեւմտահայ մշակոյթի արժէքների պահպանութեան խոստում է, այլ նաեւ նրանց պաշտպանութեան սթափ գիտակցութիւն: Մայր երկիրը «դիտորդի» դերում է:**

Հիմա արեւմտահայ հարուստ մշակութային աշխարհի մայրամուտի շքեղ հրացոլքն է՝ ահա՛ մեր ամէնից տխուր հետեւութիւնը: Իսկ հայ անկախ պետութեան, նաեւ նրա մտաւորականութեան զգալի մասի համար նման ընթացքները կասեցնելը ո՛չ ռազմավարական խնդիր է, ո՛չ էլ՝ խղճի կամ պարտքի գիտակցութիւն:

Սփիւռքահայ գրականութիւնը արեւմտահայ գրական աշխարհի վերջին 42 Կառլէն Դալլաքեան, Ակնարկներ սփիւռքահայ հասարակական մտքի պատմութեան, էջ 360:

արձագանգն է՝ գեղարուեստական հարուստ ժառանգութեամբ, թռիչքներով, տագնապներով, գրական շարժումների զարգացումների ու վայրէջքների տրամաբանութեամբ, արդեն ամբողջացող հարցադրումներով, աւարտուն բնութագրերով:

Կարելի է՞ արդեօք «օրինաչափ ընթացքներին» դիմադրական ճանապարհներ մատնացոյց անել, փոխել մայրամուտի տրամաբանութիւնը:

Ընդգծենք, որ փոփոխութիւնների անհրաժեշտութիւնը բոլորն են գիտակցում: Այսօր պետական այրերի ձեռքին է խնդրի ճանաչման ազգային-քաղաքական բանալին: Մենք կանգնած ենք քաղաքական-պատմական որոշումների շեմին: **Երկու գործնական լուծումներ, թում է, կարող են մեղմացնել անկումների թափը:**

**Առաջին** քայլը ռազմավարական է. մայր երկրում ստեղծել բոլոր նախադրեալները արեւմտահայ գրամշակութային համակարգի լիարիւն մուտքի համար: «Հասարակական գիտելիքները» երկու հատուածների մշակոյթների միջեւ միայն գնահատութեան չափանիշ չէ: Մենք պիտի ելնենք պարզ ու առողջ ելակէտից. արեւմտահայ մշակոյթը եւ լեզուն մերն են: Իսկ մենք մեր վերաբերմունքը կազմում ենք խոտոր այն մտայնութիւնից, թէ մենք արեւելահայ ենք, մինչդեռ մենք հայ ենք: Այստեղից՝ ենթակայական մօտեցումների անարդար բեռը: Վաղուց ժամանակն է, որ Հայաստանում մենք արեւելահայ չափանիշների կիրառումից ազատագրուելու ուժը ունենանք: **Մենք համահայկական միասնականութեան ճանապարհին պիտի իրար ձեռք մեկնենք: Սա միայն գիտակցութիւն չէ: Այն ներարկուելու է պետութեան բարձր վարքագծի շնորհիւ, որի սահմանագիծը ժամանակի ու ժողովրդի հանդէպ պատասխանատուութիւնն է:**

**Երկրորդ** քայլը մարտավարական է եւ բխում է առաջինից: Մշակոյթի հանդէպ հայկական ասանդակական վարքագծի փոփոխութիւնը «վիհի եզերքից» վերադարձի նախապայմանն է: Գա վերաբերում է՝

**ա) Հայաստանում արեւմտահայ համալսարանական կրթական համակարգի ձեւաորումին՝ իր բոլոր բաղադրիչներով, որի բացակայութիւնը գահավէժ է դարձրել ուսուցումը Սփիւռքի հանրակրթական հաստատութիւններում եւ բուն Հայաստանում, ուր հայագիտական ընդհանուր ուսուցումը տարանջատ է արեւմտահայ ճանաչողութեան աւագանից:**

**բ) Գասական ուղղագրութեան վերադարձին, որը երկկողմ գրական եւ լեզուական աշխարհներին ընդառաջ գնալու ամենից արդիւնաւոր ճանապարհն է:**

## Summary

### ON THE FATE OF THE WESTERN ARMENIAN MODERN LITERATURE

*Suren D. Danielyan*

Western Armenian modern literature has a certain peculiarity of development - isolated character. Since its formation it has struggled for existence, on one hand, in relation to the Soviet Armenian literary socialist approaches and on the other hand trying to establish itself in foreign environment under alien influences and external different blows. In this work special attention is paid to the old and new approaches to this literature, assessments of the classical period, as well as Diaspora Armenian and Soviet Armenian estimations (V.Teryan, L.Shant, Sh.Sahnur, M.Teoleolyan, P.Sevak, Hr.Matevosyan, Er.Azatyanyan and others). The author alarms for the Western Armenian literary-cultural decline and puts forward proposals in the direction of restoration of the unity of the divided national literature.